25րդ ՏԱՐԻ ԹԻՒ 6918 7 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1908 ԵՐԵՔՇԱԲԹԻ 24 ՐԱՄԱԶԱՆ 1326 20 Octobre 1908 25me année N. 6918

"ԱՐԵՒԵԼՔ"
ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԳԱՐԵԳԻՆ ՊՕՅԱՃԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ, ԳԱԼԱԹԻԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
Կ. Պոլսոյ համար տարեկան 80 Ղ. ս.
» » վեցամսեայ 45 »
Գաւառներու համար տարեկան 108 »
» » վեցամսեայ 60 »
Օտար երկիրներու համար տարեկան 35 Ֆր.
» » վեցամսեայ 20 »
Թղթատարի ծախքը մեր վրայ

10 ՓԱՐԱ

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

آره‌ولك
ارمنيجه يومى و سياسى غزته
صاحب امتيازى قره‌كين بوياجيان
درعليه غالطه

AREVELK
JOURNAL ARMÉNIEN
Directeur-Propriétaire
KARÉKIN BOYADJIAN
Cons/ple, Galata

10 PARAS

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ
ԵՐ. ՍՐՄԱՔԷՇԽԱՆԼԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԸ
ԿՐՆԱ՞Յ ԻՐ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ԱՊՐԵՑՆԵԼ

Այս հարցումին տեղ աւելի լաւ էր հարցնել թէ ինչո՞ւ Հայաստան իր բնակիչները չապրեցներ, ուր միշտ աղքատութեան, միշտ անօթութեան ու կարօտութեան ձայները անպակաս են. սակայն այս երկրորդ հարցման պատասխանը այնքան ծանօթ է մասնաւորաբար վերջին 10-15 տարիներու նկատմամբ, որ աւելորդ է վերստին կրկնել ու յիշեցնել թէ երկրին մէջ տիրող ընդհանուր ապահովութիւնն էր իսկական պատճառը տարիներէ ի վեր տեւող կարօտութեան, թշուառութեան և աղքատութեան։

Այլ մենք այս անգամ այդ նիւթին վրայ չէ որ պիտի խօսինք և ոչ ալ վերստին արձագանգ ըլլալ կ'ուզենք նոյն իսկ հիմակ անգամ տակաւին տիրող անապահով և հարստահարեալ վիճակին, որուն համար գանգատները և բողոքները ձայները անդադար ամէն գաւառներէ կը տեղան տիրողին և կը լեցնեն Օսմ. Մամլոյ տեղական ամէն լրագիրները, առանց պատկանեալ իշխանութեան կողմէ հարկ եղած ուշադրութիւնը գրաւելու և դարմանը տարուելու։

Ուստի կ'ուզենք այսօր խօսիլ միայն սա խնդրոյն վրայ թէ ենթադրելով որ հասնի այն երանաւէտ օրը երբ Հայաստանի ամէն կողմը իսկ տիրէ կատարեալ ապահովութիւն ու անդորրութիւն, տեղւոյն հողը պիտի կրնա՞յ ապրեցնել իր բնակիչները, որպէս զի կարենան իրենք իրենց մէջ հոգալ ապրուստին, դադրին գաղթ և օգնութիւն հայցելէ ու օտար երկիրները պանդխտելէ։

Այս հարցման պատասխանը այնչափ պարզ է որչափ դիւրահասկնալի՝ այդ տխուր վիճակին պատճառը։

Երբ նկատի առնենք Խորենացիի այն խօսքը թէ Արտաշէս Բ. Թագաւորի ատենը (85-126 Քա. է. հաշ) ոչ մը հող անմշակ չէր մնար Հայաստանի մէջ, երբ նկատողութեան առնենք թէ արդարեւ Հայաստանի ամէն գաւառներու մէջ ամէնէն անծանօթ տեղեր, անկիւններ, լեռնատներու վրայ անգամ մարդկային վաղեմի բնակութեան հետքեր կը տեսնուին, դիւրաւ կրնանք հաւանեցնել անմիջապէս թէ իր 400 հազար քառ. քիլոմեդր տարածութեանը վրայ ժամանակին բնակած ըլլալու է ոչ նուազ քան 30 միլիոն ժողովուրդ մը, որ ապրած է ճոխ և բարեկեցիկ, ինչպէս կը հասկցուի պատմութեան այլեայլ մասերէն, որոնց մէջ գանազան առիթներով նկարագրուած են մեր նախնեաց նիւթական հարստութեան, փարթամութեան և պերճութեան պատկերները և հանդիսաւորութիւնները, այնպէս որ ոչ միայն հանգիստ ու երջանիկ կեանք էին ապրել իրենց հայրենիքին մէջ, առանց ստիպուելու պանդխտութեան մէջ ապրուստ որոնել, այլ ընդհակառակն բազում գաղթականներ օտար երկիրներէ իրենց մէջ քաշելով ու հաստատելով. ինչպէս այն բազմաթիւ ցեղերը որոնք դուրսէն Հայաստան գաղթելով կազմեցին մէյմէկ ճոխ նախարարութիւններ, հողերու, կալուածներու տէր եղան և յոյժ բարեկեցիկ կեանք մը վարեցին իշխանական փայլով ու շքով, զոր օր. Արծրունիք, Գնունիք, Մամիկոնեանք, Բագրատունիք ևն. ևն։

Բաց աստի Հայաստան մեծ քանակութեամբ արտածութեան վաճառականութիւն ունէր իր սահմանակից երկիրներուն հետ, այն է Պարսկաստանի, փոքր Ասիոյ, Փիւնիկեցւոց, Ասորւոց, Ասորեստանի, Բաբելաստանի, Կովկասի և Պոնտոսի. ըսել է թէ իր արտադրութիւնը լիուլի իրեն բաւելէ ետքը՝ այնքան կ'աւելնար որ արտածման ալ կը ծառայէր։ Եւ աւելորդ է ըսել թէ բոլոր այդ վաճառքները իր երկրէն առաջ եկած նախնական նիւթեր էին։ Առանց փոխարէն ուրիշ բան չէր ներածեր, բայց միայն ճարտարարուեստի արտադրութիւնները իր սահմանակից կարգ մը երկիրներէ, որոնք բաղդատաբար աւելի զարգացած էին արհեստագործութեան և գեղարուեստի մէջ. ինչպէս Տիւրոս, Սիդոն՝ Փիւնիկէի մէջ, Բաբելոն՝ Միջագետքի հարաւակողմը, Նինուէ՝ հիւսիսակողմը, Բակտրիա՝ արդի Պուխարայի կողմերը և մասնաւորապէս փոքր Ասիոյ Յունական գաղթականութիւնները ևն.։ Բայց ինչպէս ըսինք արդէն, ներածումները կենսական պէտքեր չէին, այլ պերճանքի առարկաներ, որոնք կը գոհացընէին ժամանակին փափկասիրութեան ճաշակը։ Եւ տարակոյս չկայ թէ բարեկեցիկ ժողովուրդներն են որ պերճանքի ու ճաշակի նիւթերը կը փնտռեն, մինչ աղքատ ժողովուրդ մը իր կենսական պէտքերու գոհացումով կը բաւականանայ։

Արդ ինչ կը հետեւի վերը ըսուածներէն. — անշուշտ սա թէ Հայաստանի հողը կրնայ ապրեցնել ոչ թէ հիմակուան չափ ցանցառ բնակչութիւն մը, այլեւ անոր տասնապատիկն ալ, քանի որ իր հողը, ջուրը և օդը գերազանցօրէն նպաստաւոր են երկրագործութեան, խաշնարածութեան և գիւղատնտեսութեան՝ իրենց ամէն տեսակներովը ու ճիւղերովը։ Իսկ իր ստորերկրեայ խաւերուն մէջ ծածկուած ամենազգի հանքերը, մետաղային, քարային և հեղուկային, ո՜վ գիտէ ինչ անհուն միլիոններու աղբիւրներ չեն բանար, եթէ անգամ մը երեւան հանուին ու շահագործուին։ Եւ ո՞վ կրնայ ըսել թէ աւելի ճոխ ու առատ չըլլան քան Թրանսվալինները, քան Աւստրալիայինները, քան Բէնսիլվանիայինները ևն. ևն. բաւական է որ գիտական արդի կատարելագործեալ միջոցներով խուզարկուին, քննուին և արտադրուին երկրի արգանդներէն։ Միայն մէկ օրինակ յիշած ըլլալու համար ըսենք թէ Վանայ ծովուն հիւսիսային-արեւելեան սահմանին մօտերը Դարծաթ գիւղին մէջ քարիւղի հանք մը կայ, զոր շահագործելու համար ընկերութիւն մը կազմուած էր 1875ին, նախաձեռնութեամբ Նաղարէթ Առաւելեանի, որ Պոլսէն մասնաւոր գործիքներ բերելու ատեն հոն սպաննուեցաւ։ Այդ հանքը անսպառ առատութիւն մը ունի։ 1877ին բացուելու յիշեալ ընկերութեան ձեռքով և գետնին հոսել սկսաւ, բայց 1878ի պատերազմին ատեն աւազակաբարոյ Քրդերու ձեռքով գոցուելով մինչեւ հիմա մնացած է։ Եթէ ձեռնարկուի նոր շահագործման, գիտութեան սարքեցուցած մեթոտներով, կրնայ ըլլալ որ եթէ ոչ Պագուի հետ մրցելու չափ՝ գէթ բոլոր Հայաստանի քարիւղ հայթայթելու չափ առատ արտադրութիւն ունենայ։

Նոյնը կարելի ըսել նաեւ հանքածուխի այլեւայլ երակներու վրայ, որոնք կը վխտան Հայաստանի շատ տեղերը և կը մնան անգէտ։ Վասն զի բնական է թէ տեղացիք չէին գիտեր և չէին կրնար գնահատել անոնց արժէքը ու օգտուիլ անոնցմէ։

Հապա եթէ ճարտարարուեստի նիւթերու գանք, ինչե՞ր չենք տեսներ. միայն ճակնդեղի և կտաւատի մշակութիւնը անհուն հարստութիւն կը թափէ Հայաստան, եթէ պէտք եղածին պէս կատարուի։ Ահագին, լայնածաւալ դաշտեր և անհուն ու անսահման տարածութիւններ կարելի է սահմանել այդ երկու բոյսերուն մշակութեանը, որոնցմէ առաջ կուգայ հացէն ետք մարդկութեան առաջին պիտոյքը, շաքարը և բուրդէն ու բամբակէն ետքը տիեզերական սպառում ունեցող վուշը (քէթէն), թող կտաւատի իւղին կարեւորութիւնը իբրեւ առաջին կարգի նիւթ ներկարարութեան մէջ, զի գլխաւորապէս այդ է որ ներկերը անջինջ կ'ընէ։

Դարձեալ եթէ յիշել ուզենք շերամաբուծութիւնը, մեղուաբուծութիւնը, պտղաբուծութիւնը, գինեգործութիւնը և այլ այսպիսի գիւղատնտեսական արհեստներ ու ճիւղեր, որոնց առաջին կարգի յարմարութիւն ունին Հայաստանի հողն ու ջուրը, օդն ու կլիման, դեռ պիտի կրնանք չափել ուրիշ շատ նմանօրինակ գործեր ալ, սակայն զանց կ'ընենք, զի այսօր մեր բուն նպատակը չէ մանրամասնաբար երեւան բերել Հայաստանի հողային արդիւնագործական կարողութիւնը, այլ միայն հասկցնել թէ դրախտավայր այդ երկիրը, եթէ կատարեալ հանդարտութիւն ու ապահովութիւն վայելէ, կարող է ապրեցնել իր բնակիչները և անոնց տասնապատիկն անգամ, որով պանդխտութիւնն ալ վերջ պիտի գտնէ, աղքատութիւնն ալ, թշուառութիւնն ու սովն ալ։ Իսկ երբ փոխադրութեան միջոցներն ալ օժտուին երկաթուղիներու ցանցերովը, իր նախնական բերքերու առատութեամբը արտածման ճոխ վաճառականութիւն մըն ալ պիտի կրնայ օժանդակել երկրին նիւթական հարստութեան ու բարօրութեանը։

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ

ՄԵՐ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԸ

Անցած ուրբաթ օրուայ առաջին նիստին մէջ՝ մեր Երեսփ. ժողովը մեծամասնութեամբ քուէարկեց իր աշխարհական-կաթողիկոսական պատգամաւորը,— Սանփան էֆ. Գարբեան։ Իր քուէարկողները, առանց բացառութեան, կ'ընդունին որ Գարբեանը պարկեշտ հայ մըն է, ու, իմ կարծիքովս, քիչ մըն ալ նոր անմնացած ազգասէր, եկեղեցասէր, յառաջդիմական սկզբունքներու տրամադիր երեսփոխան։ Որով պիտի եզրակացնեմ թէ անձի խնդիր չունինք։

Բայց մեզի համար կայ կաթողիկոսական ընտրելի ու քանոնաւոր հարցը։

Երեսփոխանական ժողովի մէջ, քուէարկութենէն առաջ, երկու առաջարկութեան վրայ, վիճաբանութիւն շարունակուեցաւ։ Մեծամասնութիւնը սա կարծիքին հակեցաւ թէ իր ընտրելի պատգամաւորը պէտք է ըլլայ ազատամիտ, ուղղամիտ, հանրութեան բաղձանքներուն գիտակ մէկը։ Փոքրամասնութիւն մը, թիւով խիստ ցանցառ, ուզեց նախապէս վիճաբանութեան նիւթ ընել թէ երեսփոխանութիւնը ինչ հիմքերու վրայ կ'ըմբռնէ կաթողիկոսական հարցը. և ո՞վ է իր ընտրելին Արարատեան Մայր Աթոռին իբրեւ գահակալ որու համար պէտք է պնդել։

Առաջին մասը, «աւելի գործնական», ինչպէս ըսուեցաւ, պնդելով իր ընտրելի պատգամաւորին համեստութեանն ու ողջմտութեանը վրայ, անտեղի կը համարէր սկզբունքներու մէջ գտնել զայն, մանաւանդ որ, կ'առարկէր, առաջուընէ կարելի չէ՛ գուշակել թէ պատգամաւորական ժողովին մէջ ինչ պատահականութեանց առջեւ պիտի գտնուի իր պատգամաւորը։ Իսկ երկրորդը, ընդդիմադիր փոքրամասնութիւն մը, կ'իրաւաբանէ թէ քանի որ մեր պատգամաւորը, իբրեւ երեսփոխանութեան ընտրելին ու իր ներկայացուցիչը, բարոյական աւելի հեղինակաւոր անձնաւորութիւն մը պիտի ըլլայ, պարտաւոր ընենք զինք ամէն ջանք, ամէն արթնութիւն գործ դնել՝ յաջողցնելու մեր կաթողիկոսական ընտրելին։

Մեծ Թիւը կ'առարկէ թէ իր ընտրելին կը ներկայացնէ միայն Պոլիսը իբրեւ թեմ մը և ոչ թէ ամբողջ Թուրքիոյ հայութիւնը կաթողիկոսական ընտրութեան մէջ։ Ու սակայն եթէ իր կաթողիկոսական ընտրելին առաջարկէ, պատգամաւորը՝ իր ստացած պաշտօնական հրահանգներովը անել դրութեան մը մատնուի զայն պատգամաւորական ժողովին մէջ։ Ու իբրեւ վերջին պատասխանարան, որ կ'ամփոփուի իբրեւ ամբողջի մը մէջ, կը պնդէ թէ հարկ է ազատ թողուլ պատգամաւորը, ամէն յոյս դնելով անոր ողջմտութեան ու իմաստութեանը վրայ։

Փոքր Թիւը՝ ընդդիմադիր մասին ամբողջին հիմերը խախտած կը գտնէ, պատճառաբանելով թէ մեր պատգամաւորը անհրաժեշտօրէն քուէարկելու է երեսփոխանութեան ծրագրին վրայ՝ քուէարկելով միայն ու միայն մեր ընտրելին։

Ձայներու շփոթին մէջ սկսաւ քուէարկութիւնը ու ընտրուեցաւ պատգամաւորը։ Փոքրամասնութիւնը թերացաւ միայն սա պայմանին մէջ.— կամ չմասնակցիլ քուէարկութեան և կամ միայն սպիտակ տալ իր քուէն։

Հիմա պատգամաւորական հարցը ժողովքին մէջ վճռուելէ ետքը, անկէ զուր կը մնայ իբրեւ հասարակական նիւթ ընթերցողներուն.— Սահմանադրական ընտրութեանց մէջ եթէ ընտրելին չպիտի ներկայացնէ փոխադարձաբար ընտրողներուն պահանջքը առաջ դրուած հարցերուն մէջ, ու չպիտի պաշտպանէ զայն իբրեւ ճշմարիտ ներկայացուցիչ իր քուէարկուներուն, ինչ սահմանադրական միտք կը մնայ հարցին մէջ, և կամ ինչ կապ կայ ընտրողներուն և ընտրելիին մէջ։

Ահաւասիկ թէ ինչ կերպով կ'ըմբռնուի ընտրական հարցը ուրիշ տեղ, միեւնոյն պայմաններուն մէջ. «Վրաստանի թեմը երկրորդ թեմը լինելով Երեւանից յետոյ, նորա պատգամաւորն եւս որոշ նշանակութիւն է ստանում, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք որ Թիֆլիսը համարւում է հայ ինտելիգենցիայի կենտրոն։ Այդ տեսակէտից՝ պատուիրակները պէտք է աշխատեն ընտրել պատգամաւոր մի այնպիսի անձ առաջարկուած թեկնածուների միջից, որ կարողանայ պատուով և հեղինակօրէն ներկայացնել թեմը։ Մեր կարծիքով, Թիֆլիսի թեմի պատգամաւորը պէտք է անպայման համապատասխանէ այն պահանջներին որ հայ ժողովրդի պրոգրեսիվ տարրերը դրել են... այն է՝ պատգամաւորը պէտք է պատկանի առաջդիմական բանակին, անկեղծօրէն և անխարդախօրէն նախանձախնդիր լինի Հայոց ժողովրդական եկեղեցու շահերին, տոգորուած՝ Եկեղեցին բարեկարգելու, աւելի լրջօրէն ժողովրդականացնելու գաղափարով և կուսակից Իզմիրլեանի ու Դուրեանի կանտիտատներին, որովհետեւ, մեր կարծիքով, ներկայումս միակ յարմարագոյն և արժանաւոր կանտիտատները, կաթողիկոսական գահի համար, համարւում են այդ երկու հոգեւորականները»։ (Մշակ, Թիւ 206.)

Ինչպէս կը տեսնուի, մեր երեսփոխանութեան նոյն օրուայ նիստին և պատգամաւորական հարցի մէջ, փոքրաթիւ մասը պաշտպան կը հանդիսանար այդ կարգի տեսութեան, մինչ, մեծ թիւը, իր ձայներու շատութեամբ, իր «ողջմտութեան, իմաստութեան» բառերը կը կոխէր ոտքին մէջ, քանի որ իր պատգամաւորին մատնանիշ չըրաւ կաթողիկոսական ընտրելին ու կանխատար։

Մեծ թիւը իր բառովը չուզեց «սկզբունք» առաջարկել, որովհետեւ չգիտէ թէ ինչ անակնկալ ցնցումներ ու դժուարութիւններ կրնան մէջտեղը ելլել յանկարծ։ Այդ մասին նոյն թերթին մէջ կը կարդանք. «Էջմիածնում հանգամանքները կարող են այնպէս դասաւորուիլ, որ հարկ կը լինի գործել մեծ տակտով, խոհեմութեամբ, հեռատեսութեամբ, որպէս զի կարելի լինի աջողեցնել գոնէ ամբողջ Հայ Ազգի կողմից ընտրելի համարուած արքեպիսկոպոսի ընտրութիւնը։»

Եւ որովհետեւ ընտրելիին հետ կայ միաժամանակ կանդիդատ, Զաւէն [illegible] հաւասար իրաւունքով մասնակցած առաջին ընտրելիին, պատգամաւորը պէտք է ջանայ երկու ընտրելիի համար, որպէս զի եթէ ձախողուած մը ունենանք առաջին ընտրելիին համար, «կաթողիկոս ընտրէ դարձեալ մի արժանաւոր ժողովրդասէր և Հայոց ժողովրդական եկեղեցին բարձրացնելու, բարեկարգելու ջերմ ցանկութեամբ տոգորուած եկեղեցական»։

Ասոր համար ինչ պէտք է մեր պատգամաւորին համար. «Պէտք է լինի ազգային գործերուն հմուտ, ժողովրդական սկզբունքներու պաշտպան... յայտնի իր գործունէութեամբ և յառաջդիմական հայեացքներով և անպայման կուսակից Իզմիրլեանի կաթողիկոսացման։ Ով և լինի այդ պատգամաւորը, պատկանի նա մշակական կուսակցութեան, թէ լինի չէզոք անձ, բայց եթէ նա համապատասխան է մեր դրած պահանջներին, մենք հաճութեամբ կ'ողջունենք նրա ընտրութիւնը»։

Այդ Մշակական տողերը արտագրելով իբրեւ վերջաբան մեր պատգամաւորական վճռուած հարցին, երբեք մտադիր չենք կասկած ձգել Գարբեանի անձնաւորութեանը վրայ։ Պէտք է թելադրել անոր երեսփոխանութեան ծրագիրը, որուն հետեւելու է մեր պատգամաւորը, և միեւնոյն ատեն, ջանադիր ըլլալ որպէս զի յաջողի մեր ընտրելին։ Երեսփոխանութեան պատգամաւորը, թէեւ բուն Պոլսեցիներու իբրեւ Պոլսի ներկայացուցիչ նշանակուած է, բայց իբրեւ բարոյական անձնաւորութիւն, Տաճկաստանի հայ մասնաւորական կեդրոնէն զրկուած, կրնայ և պէտք է իր բարոյական հեղինակութեան ներքեւ առնել Թուրքիոյ բոլոր պատգամաւորները ու իր բարձր նշանակութիւնը ունենայ։ Երբ այդպիսի ուժ մը կազմուած է ժողովրդական պահանջներու և յառաջդիմական սկզբունքներու վրայ, յաջողութիւնը ձեռք կը բերուի։

Արդ, պէտք է երեսփոխանութիւնը տայ իր հրահանգները իր որոշ ընտրելիին համար ու կանխաւ հաւատի ըլլայ թէ իր պատգամաւորը պիտի ուզէ գործադիրը ըլլալ իր կողմէն անոր տրուած ծրագրին։

Այդ կապը անհրաժեշտ է երկուստեք։

ՀՐԱՆԴ

ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐ
ԻԶՄԻՐԼԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ
1895

(Շար. նախկին թիւէն եւ վերջ)

Ասոնք այնպիսի եղելութիւններ են, որք ի խոր խոցած են Հայ քրիստոնէին սիրտը և մենք իսկ առանց արտասուելու՝ չենք կրնար ընել այս յայտնութիւնը։

Երբ Պատրիարքարանը մէկ կողմէ անկարող կը գտնուէր ժողովրդեան թախանձանաց և գանգատանաց առջեւ դարման մը ձեռք բերելու իրաց վիճակին, միւս կողմէ դժուարութիւնք և արգելքներ ծագած են թէ՛ Պատրիարքական և թէ՛ Առաջնորդական իրաւասութիւններն և կրօնական առանձնաշնորհումներն անվթար պահպանելու, որով Հայոց ազգային հոգեւոր կազմակերպութիւնն ևս քայքայման վիճակի մատնուած է։

Ահաւասիկ գլխաւոր խրդութիւններն.

1. Հայոց Ազգը Սահմանադրութիւն մ'ունի Կայսերական Իրատէով հաստատեալ որ իր եկեղեցական և կրօնական մատակարարութեան, հոգեւոր պետերու և ժողովոց ընտրութեան, և անոնց պաշտօնավարութեան ձեւերն ու եղանակը կը սահմանէ, սակայն անոր մէկ քանի հիմնական տրամադրութեանց կիրառութիւնը և անոր հայերէն անուան լրագրաց մէջ գրուիլը, ինչպէս նաև հաստատման առընթերակն տնօրինութիւնը գանազան մեկնութեամբ արգիլուած է կառավարութեան կողմէ։ Նոյնպէս, թոյլ չտրուիր նոյն օրինօք սահմանեալ ժողովոց և խորհրդոց անդամներուն՝ իրենց օրինաւոր նիստը կազմելու և անոնցմէ բանտարկուածներ ևս գտնուած են, ինչպէս իբր յանցապարտ բանտարկուած են նաև նոյն իսկ այդ ժողովներու կազմութեան համար ըստ օրինի քուէ տալու կոչուած անձերն՝ առարկելով թէ յեղափոխական մասնախումբ ընտրած են։ Այս պարագաներ ցոյց կու տան թէ Ազգ. Սահմանադրութիւնը դադրեցուցեալ հանգամանք մը ստացած է, յորմէ կը հետեւի քայքայումն ազգային կրօնական կազմակերպութեան։

2. Պատրիարքական Պէրաթն ու եկեղեցական առանձնաշնորհմունք կը տրամադրեն որ երբ Առաջնորդ մը կամ եպիսկոպոս մը պաշտօնանկութեան և արտա-

---

„ԱՐԵՒԵԼՔ„Ի ԹԵՐԹՕՆԸ

ՐԱՖՖԻ

ՍԱՄՈՒԷԼ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(30)

ԺԳ.
ՆՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ոչինչ չէ կարող փոխարինել քեզ, ոչ փառք, ոչ մեծութիւն և ոչ արքաների թագը։ Դու ինձ համար ամեն ինչ ես, Թանգագին Աշխէ՛ն։ Քո մէջն եմ գտնում իմ սրտի խաղաղութիւնը, քո մէջն եմ գտնում իմ վշտերի մխիթարութիւնը, քո անունը յիշելիս, լռում է հոգսը, անհետանում է մռայլը, և իմ հոգու մէջ ծագում է ուրախութեան լուսապայծառ արեգակը։ Երբ թախծալի յուսահատութիւնը պաշարում է ինձ, երբ կանխահաս արհաւիրքը թուլացնում է իմ ուժերը,— դո՛ւ ես ոգեւորում ինձ քո աստուածային ներշնչութեամբ, դո՛ւ ես կենդանացնում մեռած եռանդը և լքած հաւատը։ Եւ այս րոպէում, երբ իմ հայրենիքը մեծ տագնապի մէջ է, երբ ամեն սրբութիւն, ամեն հաստատութիւն կործանելու վրայ է,— երբ թշնամին իւր բոլոր անգթութեամբ կանգնած է մեր գլխին,— ա՜յդ օրհասական րոպէում քո սէրը, նազելի Աշխէն, որպէս մի պահապան հրեշտակ, վառում է իմ սիրտը անձնազոհութեան հրով, մղում է ինձ դէպի վտանգը... դէպի կոտորածը... դէպի արիւնը... կանչի՛ր փոթորիկը, կը լսէ՛ զէնքի շառաչիւնը, կը գա՜յ երջանիկ օրը, և վաստակած զինուորը կը հանգչի սիրած կուրծքի վրայ»...

Իւր խորին յափշտակութեան մէջ, չը նկատեց Սամուէլը, թէ ինչպէս դուռը կամաց բացուեցաւ, և մէկը, ոտքից ցգլուխ փաթթուած սեւագոյն լայն սփածանելիքի մէջ, յայտնուեցաւ սենեակում։ Մի մթին ուրուականի նման, հազիւ-հազ շարժուելով, անցաւ նա պատերի մօտով և կանգնեց մի անկիւնում։ Անկիւնի կիսամռայլից երկար նայում էր նա յուզուած երիտասարդի վրայ և լսում էր նրա զգացմունքներով լի մենախօսութիւնը։ Երեսը ծածկուած էր մետաքսեայ սեւ դիմակով։ Սամուէլը դեռ արձանի նման կանգնած էր լուսամուտի հանդէպ և դէմքը դարձրած ունէր դէպի այն աշխարհը, որի մասին խօսում էր։ Երբ վերջացրեց, գլուխը խոնարհեցրած կուրծքի վրայ, թեւերը խաչաձեւ փակած, որպէս մի ուշացնոր երազող, մի քանի անգամ անցաւ սենեակի միջով, և ապա մօտեցաւ մի բազմոցի, յենուեցաւ նրա վրայ։ Այդ խռովեալ դրութեան մէջ մոռանում էր նա, երբ յանկարծ զգաց, որ երկու ատլասեայ ձեռքեր բռնեցին իւր ձեռքը։ Նա սոսկաց։ Մթին ուրուականը իսկոյն մի կողմ ձգեց իւր դիմակը և սփածանելիքը։ Սամուէլի զարմանքը աւելի մեծ եղաւ, երբ իւր հանդէպ տեսաւ գունաթափ Որմիզդուխտին։

—Մի՛ շփոթուիր,— ասաց նա հանգիստ ձայնով.— ես բոլո՛րը լսեցի... բոլո՛րը հասկացայ... Ես թէեւ հայերէն չեմ խօսում, բայց սիրոյ լեզուն, սիրոյ ձայնը՝ ամեն ազգի հասկանալի է...

—Որմիզդո՛ւխտ,— բացականչեց ապշած երիտասարդը,— այդպէ՞ս, գիշերը... այդպէ՞ս, տարաժամ...

—Այո՛, այդպէս տարաժամ եկայ քեզ մօտ մի շա՛տ կարեւոր գործի համար, Սամուէլ, միայն համբերութիւն ունեցիր լսելու։

Ամբողջ մարմնով դողում էր նա։ Սամուէլը բռնեց նրա ձեռքից, նստացրեց իւր մօտ, բազմոցի վրայ։ Երբ փոքր ինչ հանգստացաւ նա, դարձաւ դէպի երիտասարդը, ասելով.

—Կողպի՛ր դուռը, մեր խօսակցութիւնը պէտք է առանձին լինի։

Սամուէլը կատարեց նրա ցանկութիւնը։

— Ներէ՛ր ինձ, Սամուէլ,— ասաց նա թախծալի ձայնով,— ես խանգարեցի քո սրբազան հոգեզմայլութիւնը... ես լսեցի քեզանից այն թանգագին բառերը, երբ դու քո սրտի հետ պէտք է խօսէիր...

Սամուէլը խօսք չգտաւ պատասխանելու։ Նա շարունակեց.

— Սիրի՛ր նրան, Սամուէլ, որին այնքան ջերմ սիրով նուիրել ես քո սիրտը։ Դու արժանի ես մի լաւ կնոջ։ Քեզանով բախտաւոր կը լինի կինը, դու կը բախտաւորացնես ամեն կնոջ...

Վերջին խօսքերը արտասանեց նա հեկեկանքով։

Նա ձեռքը տարաւ դէպի գլուխը, յետ քաշեց ճակատի վրայ թափուած գանգուրները, որ, կարծես, աշխատում էին ծածկել նրա արտասուքը։

— Լսի՛ր, Սամուէլ,— առաջ տարաւ նա րոպէական լռութիւնից յետոյ։— Այդ տան մէջ դու էիր իմ մխիթարութիւնը։ Ամենքը երկրպագում էին ինձ, բայց սրտով ատում էին։— Երկրպագում էին, որովհետեւ ես Արեաց մեծ Թագաւորի քոյրն էի։ Ատում էին, որովհետեւ ես պարսիկ էի, հեթանոս էի, մի քրիստոնեայ ընտանիքի մէջ խեղդվում էի, որպէս մի մռայլ գերեզմանի մէջ։ Բայց դու, միայն դո՛ւ, ազնիւ Սամուէլ, քաղցրացնում էիր իմ կեանքի դառնութիւնը, և փարատում էիր դժբախտ օտարուհու տխրութիւնները։ Եթէ դու չը լինէիր, ես վաղուց թողած կը լինէի այդ տունը և գնացած կը լինէի իմ հայրենիքը։— Այժմ լսի՛ր, սիրելի Սամուէլ, թէ ինչու եկայ քեզ մօտ, այդպէս գիշերով, այդպէս տարաժամ։

Շփոթուած երիտասարդը, որ դեռ եւս ապշութեան մէջ էր գտնվում, գլուխը վեր բարձրացրեց և նայեց զգածուած կնոջ բոցավառ աչքերի մէջ։ Նա բռնեց Սամուէլի ձեռքը, ասելով.

— Իմ կրօնը ուսուցել է ինձ՝ բարութիւնը բարութեամբ վճարել, առաքինութեամբ։ Դու միշտ բարի ես եղել դէպի ինձ, սիրելի Սամուէլ։ Ես եկայ պարտքս վճարելու։— Քո կեանքը վտանգի մէջ է... Վտանգի մէջ է և այն էակի կեանքը, որին դու սիրում ես...

— Այդ ինչ ես ասում... ինչ վտանգ... բացականչեց երիտասարդը զայրացած ձայնով։— Նա վտանգի մէջ է... ասա՛, Որմիզդուխտ,... ես հէնց այս րոպէում պատրաստ եմ ինձ կրակի և արեան մէջ նետել և ազատել նրան... Ասա՛, ինչ վտանգ...

Նա վեր թռաւ բազմոցի վրայից, կանգնեց տիկնոջ առջեւ, անդադար կրկնելով վերջին հարցմունքը։

— Հանգստացի՛ր, Սամուէլ,— ասաց տիկինը մեղմութեամբ,— և նստի՛ր քո տեղը։ Վտանգը դեռ եւս այնքան մօտ չէ, որի համար հարկաւոր լինէր շտապել։ Վտանգը հասնելու վրայ է։ Նստի՛ր, ես բոլորը կը պատմեմ քեզ։

Սամուէլը նստեց, աղաչելով.

— Ի սէր Աստուծոյ, մի տանջիր ինձ, ինչ որ ասելու ես, շուտ ասա։

Բարեսիրտ տիկինը, չը կամենալով միանգամից հարուածել երիտասարդի զգայուն սիրտը, բաւական հեռուից սկսեց իւր հաղորդելու նոր տեղեկութիւնները.

— Դու,— ասաց նա,— այսօր քո մօր ներկայութեամբ պատմեցիր ինձ իմ ամուսնու և Մերուժան Արծրունու վերադարձը Տիզբոնից,— պատմեցիր և նրանց հետ պարսից երկու զօրավարների գալուստը,— պատմեցիր և այն, թէ ինչ գործեր պէտք է կատարեն նրանք ձեր երկրում,— բայց ամենագլխաւո՛րը, կամ քեզ յայտնի չէր, կամ ծածկեցիր ինձանից։

— Ես ոչինչ չը ծածկեցի քեզանից, Որմիզդուխտ, ինչ որ գիտէի, բոլորը պատմեցի։

— Ուրեմն ամենագլխաւորը քեզ յայտնի չէ։ Լսի՛ր, Սամուէլ։ Նախ, ի զուր էք սպասում դու կամ քո մայրը, որ նրանք Տիզբոնից կը մտնեն Հայաստան։ Սկզբից այստեղ չեն գալու։ Նրանք կը մտնեն Հայաստան Վասպուրականի կողմերով, որը Մերուժանի իշխանութեան երկիրն է։ Նրանց առաջին գործը կը լինի՝ կալանաւորել Հայոց բոլոր նախարարներին և շղթայակապ ուղարկել Տիզբոն։ Այնտեղից կը վարեն նրանց ձեր թագաւորի մօտ, որը այժմ մի բերդում աքսորուած է։ Յետոյ նրանց երկրորդ գործը կը լինի՝ կալանաւորել աքսորուած նախարարների կանանց, զաւակներին և պահել բերդերում խիստ հսկողութեան ներքոյ...

— Որոնց հետ և այն հրեշտակին, որին ես սիրում եմ... ընդհատեց Սամուէլը խորին վրդովմունքով։— Այդպէս չէ՞, Որմիզդուխտ։

(Շարունակելի)

բանայ դատապարտելու ամբաստանութեան ենթարկուի, կառավարութեան պաշտօնէից կողմէ սուտ գործ մը Պատրիարքին և չպատժուի եկեղեցական մը, մինչեւ որ հոգեւոր իշխանութիւնը կարգադրել չընէ զայն։ Այլ սակայն եկեղեցականք բանտարկուած, աքսորուած և պատժուած են, ինչպէս յիշեցինք ի վեր անդր և այս ամենայն տեղի ունեցած են բոլորովին այս առանձնաշնորհմանց և պետական կարգադրութեանց հակառակ կերպով։ Իսկ կանոնազանց եկեղեցականն ի կարգ հրաւիրելու և ի հարկին պատժելու համար Պատրիարքին իրաւասութեան գործադրութիւնը դժուարութեան մինչեւ իսկ արգելքի հանդիպած է կառավարութեան միջամտութեամբ։

3. Պատրիարքարանի տպագրել տուած գրքերը՝ իբր անհատական գրութիւնք հասարակաց կրթութեան պաշտօնատան գրաքննչաց քննութեան և նոյն պաշտօնատան վաւերացմանը և արտօնութեանը ենթարկուած չըլլալուն՝ կ'արգիլուին հրատարակուելէ, ինչպէս նաև Պատրիարքարանի կողմէ լրագրաց տրուած ծանուցումներն և յայտարարութիւններն։

4. Հայոց ծխական վարժարաններն հիմնուած և սահմանուած են, որպէս զի ո՛չ միայն հայ մանկտոյն ուսում և գիտութիւն աւանդուի այլ և իրենց կրօնքն և լեզուն ու պատմութիւնը պէտք եղածին պէս ուսանին և կրթուին ա՛յնպէս ինչպէս կը պահանջէ կրօնքն ու բարոյականութիւնն և Ազգն է որ կը հոգայ ու կը մատակարարէ անոնց ծախքը։ Սակայն հասարակաց կրթութեան Նախարարութեան մէկ կարգադրութեամբը Պատրիարքական և Առաջնորդական իրաւասութենէն, պատասխանատուութենէն և հսկողութենէն առնուելով Ազգին վարժարաններն՝ անհատներու կողմէ հաստատեալ վարժարաններու կարգը դասուած են։

5. Մինչեւ հոգեւոր իշխանութեան կը պատկանի կտակի և դրամօժիտ մասին ծագած խնդրոց կարգադրութիւնը, վերցուած է այդ իրաւունքը Հայոց Պատրիարքին և Առաջնորդաց։ Հայոց և Յունաց Պատրիարքարաններու եկեղեցական առանձնաշնորհմանց խնդիրը յուզուած միջոցին Բ. Դուռը յայտարարած և խոստացած է բերանացի կերպով թէ՝ առանձնաշնորհմանց մասին Յունաց Պատրիարքարանին համար ըլլալիք կարգադրութիւնն պիտի վերաբերի նաև Հայոց Պատրիարքարանի, սակայն կտակի և դրամօժիտ ինչպէս նաև եկեղեցեաց դպրոցներու նկատմամբ Յունաց իրաւասութիւն տրուած բայց զլացուած է Հայոց։

6. Եկեղեցեաց, դպրոցաց և նմանօրինակ հաստատութեանց կառուցման կամ նորոգութեան համար արտօնութիւն տրուելու մասին Պետութեան կողմէ վերջերս սահմանուած եղանակը՝ փոխանակ դիւրացնելու այս կարգի գործողութիւնները, դժուարութեան և յապաղման դատապարտած է։ Բաց աստի Պետութեան ո՛յն կարգադրութիւնը, որ կը յայտարարէ թէ այն եկեղեցիներն և դպրոցներն, որք Արքունի հրովարտակ չունին, պիտի փակուին մինչեւ որ նոյնը ստացուի, դժուարութիւն յառաջ բերած է արդէն կառուցեալ և հաստատեալ եկեղեցեաց և վարժարանաց մասին, ինչպէս որ Մամուրէթ-իւլ-Ազիզի կուսակալութեան ներքեւ Էկին գաւառին Աղըր գիւղախմբի երեք գիւղերուն բազում տարիներէ ի վեր կառուցեալ եկեղեցեաց հրովարտակներուն ո՛ւր պահուած և որ՛ու քով մնացած ըլլալը կարելի չըլլալով ցոյց տալ գիւղացւոց անծանօթ լինելուն պատճառաւ, գիւղախմբին միւտիրը փակեր է զանոնք՝ դռներն ալ կնքելով, որպէս զի ժողովուրդը չը բանայ։ Այդ եկեղեցեաց հրովարտակ տրուած ըլլալը և անոնց թուականները Պատրիարքարանիս կողմէ թէեւ իմաց տրուած է Բ. Դրան և արգելքին բարձումը խնդրուած թէ՛ գրով և թէ՛ բանիւ, սակայն պատասխան տրուած է գլխաւորապէս թէ անոնց վերաբացման համար ի նորոյ հրովարտակ պէտք է ստանալ, ինչ որ՝ տակաւին երկար ատեններ յիշեալ երեք գիւղերու ժողովուրդը զուրկ պիտի թողու եկեղեցական արարողութենէ և հոգեւոր մխիթարութենէ։ Այս վերջին կարգադրութեամբ պիտի փակուին այն ամէն եկեղեցիք, վանօրայք և վարժարանք, որք Օսմանեան տիրապետութենէն առաջ կառուցուած ըլլալով՝ չունին հրովարտակ, և նոյն իսկ անոնք, որ թէեւ տիրապետութենէն յետոյ կառուցուած են, բայց հրովարտակներն չկան մէջտեղ ո՛ գիտէ ի՛նչ պատճառաւ։

7. Ըստ Քրիստոնէական կրօնի, ժառանգութեան իրաւունք կը ստանայ այն որ ծնեալ է հարազատ և օրինաւոր ամուսնութենէ, որ կը հաստատուի մեռնողին ժառանգորդին պատկանած հոգեւոր իշխանութեան տեղեկագրութեամբը, սակայն Շէրիի դատարանք ժառանգութեան հէօճէթ տալու պահուն՝ այս ու այն անձին վկայութիւնը բաւական կը համարին և իրենց հէօճէթին իբր հիմ չեն ընդունիր Պատրիարքարանի տեղեկագրութիւնը և կատարելապէս կը հեռանին իսլամ կրօնին այդ կարգի խնդրոց մասին ունեցած տրամադրութեանցը։

8. Հայոց Ազգը՝ Պետութեան գանձին վճարած տուրքերէն զատ՝ կը վճարէ նաև կրթական տուրք մը, սակայն ատոնց այդ տուրքէն բաժին մ'ստանալու իր վարժարանաց համար՝ անոնց պէտքերը կը հոգայ կամաւոր հանգանակութեամբ։ Իսկ թէ՛ վարժարանաց և թէ՛ եկեղեցեաց այս պէտքերուն համար եղած հանգանակութիւնք մեծ դժուարութեանց մատնուած էին Տէրութեան վերջին մէկ կարգադրութեան պատճառաւ, և այժմ բոլորովին արգիլուած են։ Նոյնպէս ըստ աւանդական նախնի սովորութեան՝ վանօրէից պէտքերը հոգացուելու համար ժողովրդեան կամաւոր նուէրը և նպաստը ստանալու պաշտօնով նուիրակներ կը ղրկուէին թեմերը և այս սովորութիւնը յիշատակուած է ուրիշ առանձնաշնորհմանց պէրաթներու և ֆէրմաններու մէջ։ Գաւառական իշխանութիւնք սոյն առանձնաշնորհումը և սովորութիւնն ալ բացարձակապէս կ'արգիլեն, Բ. Դրան հրամանն այս է ըսելով և կարելի չըլլար հոգալ վանօրէից պէտքերը, ինչպէս որ կ'արգիլուի նոյն իսկ Զատկի և Ծննդեան առթիւ աղքատաց համար ողորմութեան նպաստ ստանալ կարողներէն և եկեղեցեաց պայծառութեան համար իւղագին նուէր հաւաքել։

* * *

Ահաւասիկ, Վսեմափայլ Նախարար, համառօտ մէկ նկարագիրն Հայոց Ազգին ընդհանուր վիճակին, որու նկատմամբ կարեւոր տեղեկութիւններն հաղորդուած են արդէն կայսերական կառավարութեան այն բազմաթիւ թագրիրներով, զորս Պատրիարքարանը շատ տարիներէ ի վեր անընդհատ մատուցած է և որոց կարեւորագոյններուն մէկ ցուցակն կը ներկայացուի տեղեկագրիս հետ։

Օսմանեան կառավարութիւնը բազմիցս հայաբնակ նահանգաց վիճակն ու տեղական պիտոյից պահանջումներն զանազան քննութեամբ ստուգած և վերահասու եղած է ամենայնի։ Ազգային Պատրիարքարանը բազմիցս դիմելով առ Տէրութիւնն խոստումներ ընդունած է բարենորոգումներ ի գործ դրուելու և այս վիճակին դարման տարուելու համար, սակայն իւր դիմումներն և ընդունած խոստումներն ի դերեւ ելած են։

Հայոց Ազգը, Վսեմափայլ Նախարար, կը ցանկայ իբր Քրիստոնեայ ժողովուրդ, կրօնի կատարեալ ազատութեամբ, ազգ. և հոգեւոր կազմակերպութեամբն և եկեղեցական առանձնաշնորհմանց անվթար պահպանմամբը և իբր Հայ՝ իւր ազգայնութեան յատուկ դրօշմովն ապրիլ աշխարհի վրայ, հաստատուելով այնպիսի դրութեան մը, ուր կարենայ վայելել այն ամէն իրաւունքներն, զորս քաղաքակրթութիւնը կ'ապահովէ աշխատասէր ժողովրդոց։ Եւ մեր խորին համոզումն այն է, Վսեմափայլ Նախարար, որ Հայոց Ազգին այդ բաղձանաց իրագործումն նոյն իսկ Օսմանեան Պետութեան և Երկրին շահուց համաձայն է։

Պատիւ ունիմ, Վսեմափայլ Նախարար, եւն., եւն.։

8 Փետրուար 1895

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Բարիզի օսմ. դեսպան Նաում փաշա մէկ քանի թղթակիցներու յայտարարեց թէ Օսմ. Կառավարութիւնը արդարեւ որոշած էր պատշաճ ամէն միջոցներ ձեռք առնել, թէ զօրահանութեան ծրագիր պատրաստած էր և թէ երկաթուղիի Ընկերութիւնները այդ մասին հրամաններ ստացած էին, սակայն առաջադրուած միջոցները յետաձգուած են, վասն զի Բ. Դուռը ստացեր է Պուլկարիայէն 48 ժամուան մէջ պահանջուած ապահովութիւնը թէ կացութիւնը պիտի փոխուի ի նպաստ խաղաղութեան։

—Պուքրէշի մէջ կիրակի երեկոյ, հազարաւոր հոգի, մեծ մասը երիտասարդներ, փողոցները պտտեցան [illegible] և [illegible] աւստրիահունգարական վաճառականներուն [illegible]։ Ոստիկան-զինուորները ի զուր փորձեցին ցրուել ցուցարարները, որոնք նորէն հաւաքուեցան կողմնակի փողոցներուն մէջ։ Կէս գիշերէն երկու ժամ առաջ ընդհանուր հանդարտութիւնը վերահաստատուած էր։ Փողոցներու մէջ հետաքրքիրներու փոքր խումբեր միայն կը տեսնուէին։ Մէկ քանի ձերբակալութիւններ կատարուեցան։

—Օտեսա քաղաքը քօլերայէ զերծ հռչակուեցաւ։

—Ճափոնի նշանաւոր զինուորական Նոծու մարէշալը մեռաւ։

—Դանիրէլի Թրամուէյի պաշտօնեաները գործադուլ ըրին. թոշակի հարիւրին քառասուն յաւելում կը պահանջեն։

—Րէյխէնպուրկի մէջ Պիզմարքի կիսարձանին բացումը կատարուեցաւ։ Ներկայ էին նախարարապետ Ֆոն Պիւլով իշխանը և ուրիշ պաշտօնատարներ։

—Քէօլնիշէ Զայդունկ, Թուրքիոյ մէջ աւստրիական ապրանքներու դէմ մղուած պայքարին վրայ խօսելով, կ'ըսէ.— «Պէտք է խրատել Թուրքերը, իրենց շահուն համար, թէ կարելի եղածին չափ զգուշանալու են որ այդ պայքարին հետեւանքով կացութիւնը չծանրանայ։ Անշուշտ այդ պայքարը կը վնասէ աւստրիական վաճառականութեան և ձեռարուեստին, բայց Թուրքերը պէտք է գիտնան թէ այդ վնասը այնքան կարեւոր չէ որ Աւստրիա-Հունգարիա իր քաղաքականութիւնը փոխէ Պոսնայի և Հէրսէկի կցման մասին, բայց ասոր հակառակ կրնայ պատճառ ըլլալ որ Աւստրիոյ-Հունգարիոյ մէջ Թուրքերու մասին աննպաստ զգացումներ առաջ գան և անոր հանդէպ ծանր դժուարութիւններ ծագին։ Կրաւորական պայքարը այդ վիճակը կրնայ առաջ բերել, սակայն ո՛րքան իրաւունքով կրնայ տեղի ունենալ երբ Եաֆայի նման դէպքեր ալ ընկերանան նոյն պայքարին։ Բ. Դուռը ո՛րքան շուտով յայտարարէ թէ Աւստրիոյ-Հունգարիոյ կողմէ այդ մասին ըլլալիք բողոքները գոհացում պիտի գտնեն, այնքան խոհեմութեամբ գործած պիտի ըլլայ։ Միանգամայն Բ. Դուռը, իր իսկ շահուն համար, պէտք է թոյլ չտայ այդ տեսակ դէպքերու կրկնուիլը։ Այս գործին մէջ բարեկամական լաւագոյն խրատն է որ կրնայ իրեն տրուիլ։»

—Պերլինի սեղանաւորական շրջանակներուն մէջ կ'ըսուի թէ Ռումէլիի երկաթուղիներու խնդիրը կրնայ կարգադրուիլ՝ անոր մասին սեղանաւորական միջազգային համաձայնութեամբ մը։ Կարելի է Ընկերութիւն մը կազմել, որուն մէջ ներկայացուցիչներ ունենան պայմանագիր տէրութիւնները։ Վերոգրեալ շրջանակներուն մէջ այնպէս կը նկատեն թէ այդ կերպով կարելի պիտի ըլլայ գործնականապէս կարգադրել այդ խնդրոյն առաջ բերած բոլոր դժուարութիւնները։

Պ. ԲԻՇՈՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Թանի աշխատակից Պ. Ժօրժ Վիլիէ հետեւեալ տեսակցութիւնը ունեցած է Ֆրանսայի արտաքին գործոց նախարարին հետ.— «Պ. Բիշոնը տեսայ և հարցուցի թէ ի՛նչ կարծիք ունէր Լոնտոնի մէջ կատարուած բանակցութեանց և անոնց արդիւնքին վրայ։ Արտաքին գործոց նախարարը սա պատասխանը տուաւ.

— Համաձայնութիւնը գոյացած է։ Բայց Սըր Էտուարտ Կրէյի և Պ. Իզվոլսքիի հետ համախորհուրդ, որոշուած է որ մինչեւ նոր տնօրինութիւն, համաձայնութեան նիւթը պաշտօնապէս չհրատարակուի։ Գալով ինծի, այդ յանձնառութիւնը խախտել պիտի չուզեմ, ո և է [illegible] չընելով դեսպանախորհուրդի յայտագրին վրայ։ Ինչո՞ւ համար։ Շատ պարզ պատճառի մը համար, և որ ապահով եմ թէ պիտի հասկցուի ու պիտի գնահատուի ամէնուն կողմէ։ Ֆրանսա, Անգլիա և Ռուսիա բարեկամութեան ցոյց տուին, բարեկամական տեսակցութեան մը մէջ, ջանալով հիմերը դնել դեսպանախորհուրդի մը յայտագրին, զոր անհրաժեշտ կը նկատեն։ Բայց անոնք բնաւ չեն յաւակնիր ուրիշ տէրութեանց տեղ ալ բռնել և առանց անոնց լուծել խնդիր մը, որուն վրայ պարտին բանակցիլ Պերլինի Դաշնագիրը ստորագրող բոլոր տէրութիւնները։ Իմ կարծիքովս, պէտք է այդ ստորագրողներուն ձեռք ձգել մեր ջանքերուն արդիւնքը և անոնց կարծիքը ստանալ, ո և է բան հրատարակութեան տալէ առաջ։ Պէտք չէ, չենք ալ ուզեր և ոչ ոք կ'ուզէ որ այդ գործը ծածուկ տէրութեանց [illegible] մէջ, [illegible]։ Եւրոպայի միաբանութիւնը, [illegible] և սիրալիր համաձայնութիւնն է որ պիտի լուծէ զայն։ Լոնտոնի մէջ կատարուած տեսակցութեանց միջոցին հաճոյքով հաստատեցինք թէ Անգլիոյ, Ֆրանսայի և Ռուսիոյ համաձայնութիւնը աւելի քան երբեք սերտ դարձած է։ Բայց ոչ նուազ գոհ ենք, գիտնալով թէ միեւնոյն հայեցողութիւնն ունինք ուրիշ տէրութեանց հետ, որոնց հետ ո՛չ մէկ յանձնառութիւն ունինք։ Որովհետեւ այնպէս կը կարծենք թէ այդ գործին մէջ Եւրոպա պարտի ամէն բանէ առաջ ցոյց տալ իր բարոյական միութիւնը։ Արդէն ըրինք, ինչ որ մենէ կախում ունէր, որպէս զի այդ միութիւնը իրագործուի։ Պիտի շարունակենք այդ բանը, մեր հաշուոյն և առանց ո և է յետին մտածումի, որպէս զի համաձայնական կառավարութիւնը հաւասարակշռութեան ազդակ մը ըլլայ տէրութեանց մէջ։»

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԽՆԴԻՐԸ

Պուլկարիոյ նախարարութիւնը անցեալ օր ինկաւ։ Կ'ըսուի թէ այդ անկումը առաջ եկած է Ֆէրտինանտ իշխանին և ժողովրդեան մեծամասնութեան պատերազմի հակառակ ըլլալէն և վերջերս Եամբոլի [illegible] մէջ կատարուած խորհրդակցութիւններէն։ Ուրիշ լուր մը նայելով, Պուլկարիոյ նախարարներուն մէկ մասը հրաժարած է։ Բ. Դուռը այդ մասին տակաւին պաշտօնական տեղեկութիւն մը չէ ստացած։

— Մեծ տէրութեանց Սոֆիայի ներկայացուցիչները ծանուցին նախարարութեան թէ Պուլկարիա ամէն պարագայի մէջ պէտք է զգուշանայ պատերազմէ։ Պուլկար կառավարութիւնն ալ յայտարարեց թէ ան պիտի զգուշանայ պատերազմ առաջ բերելէ։

— Սոֆիայի մէջ հանրային կարծիքը գոհունակութեամբ ընդունած է Պուլկարիոյ նախարարութեան անկումը։ Կը հաւատան թէ նոր նախարարութիւնը պիտի աշխատի խաղաղութեան համար։ Յուսալի է որ Թուրքիոյ և Պուլկարիոյ միջեւ համաձայնութիւն կը գոյանայ։

— Աւջի երեկոյեան Կ. Պոլսոյ մէջ լուր ելաւ թէ Թուրքիոյ և Պուլկարիոյ միջեւ պատերազմ պիտի ծագի, սակայն յետոյ հաստատուեցաւ որ այդ լուրը անհիմն է։ Օսմ. [illegible] նոյն ալ արդիւնք էր Պուլկարիոյ [illegible], որոնց համաձայն, Թուրքիա պատերազմական պատրաստութիւններ կը տեսնէ։ Արտաքին գործոց նախարար Թէվֆիք փաշա ալ յայտարարած է օտար դեսպաններուն թէ պատերազմի պատրաստութեան լուրերը անհիմն են։

— Գերմանիա յայտարարեց թէ Պուլկարիոյ խնդրոյն մէջ Ռուսիոյ տեսակէտը պիտի ընդունի։

— Իտալիա ալ ընդունած է միջազգային դեսպանախորհուրդին ծրագիրը։

— Թագվիմի Վագայի հետեւեալը կը գրէ.— «Մեծ-Եպարքոսը և Ներքին գործոց նախարարը իմացան որ Պուլկարիա, [illegible] ճամբով զէնքեր ու ռազմամթերք կը փոխադրէ և կը բաշխէ [illegible] կողմերը։ Խնդիրը հարցուցաւ [illegible] կուսակալէն, որ պատասխանեց թէ այդ մասին տեղէն բան մը գիտցուած չէ և կուսակալութիւնն ալ տեղեկութիւն մը չունի, որով հաղորդուած այդ տեղեկութիւնը [illegible]։ [illegible] քննութեան ձեռնարկուած է և արդիւնքը պիտի հաղորդուի։»

— Եէնի Կազէդայի Սոֆիայի թղթակիցը հետեւեալը կը հաղորդէ.— Մեծ տէրութեանց այս տեղի բոլոր ներկայացուցիչներուն հետ տեսնուեցայ։ Զինուորական վերջին պատրաստութեանց հրամանը հոս ստացուեցաւ։ [illegible] կը տիրէ։ [illegible] պատճառ մը չկայ։

— Սապահի թղթակիցն ալ կ'ըսէ թէ Անգլիոյ և Ֆրանսայի խիստ յանձնարարութեանց հետեւանքով խաղաղութիւնը կատարելապէս ապահովուած կրնայ նկատուիլ։ Բոլոր լրագիրները այդ մասին գոհունակութիւն կը յայտնեն։ Ընկերվարականները միտինկ մը կազմելով քննադատած են պուլկար կառավարութեան առաջուան անխոհեմ ընթացքը։

— Պատերազմական Նախարարութեան ծանուցումն թէ, կ'ըսէ Սապահ, սահմանագլուխին պուլկար պահականոցներուն յարմար տեղերը [illegible] գրուած են։

—Աւջի առտուն Պուլկարիոյ արտաքին գործոց նախարարին ստորագրութեամբ և «Կ. Պոլսոյ պուլկարական դեսպանատան» հասցէով հեռագիր մը ժամանեց հոս։ Հեռագրատունը այդ հեռագիրը հաղորդեց Մեծ-Եպարքոսին, որ հրամայեց այդ հեռագիրը եկած տեղը վերադարձնել, քանի որ Կ. Պոլսոյ մէջ «պուլկարական դեսպանատուն» անունով հասցէ մը չկայ։

—Հաւաս կ'իմանայ Կ. Պոլսէն թէ Օսմ. Կառավարութիւնը հրամայեր է պատերազմական վիճակի մէջ դնել Անատոլուի զինուորները։

—Բարիզի օսմ. դեսպան Նաում փաշա յայտարարեր է թղթակցի մը թէ Թուրքիա կատարելապէս խաղաղասէր է, սակայն քիչ ատենէն զգայացունց դէպք մը պիտի պատահի, որ խաղաղութիւնը պիտի հաստատէ։

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՄԷՋ

Սղերդի Ասորիներու առաջնորդական փոխանորդը գրած է Կ. Պոլիս գտնուող իրենց Պատրիարքին թէ նշանաւոր մարդասպան Պէտրհանը ու արբանեակները ձերբակալելու մասին տրուած հրամանը չէ գործադրուած։ Շիրվանի մէջ աւազակները հալածելու և նուաճելու համար զինուոր չկայ ու տեղական կառավարութիւնն ալ բան մը չըներ. այդ պատճառով անգործադրելի կը մնան եկած հրամանները։ Իրան գիւղին բնակիչները [illegible] ամիսէ ի վեր իրենց տուներէն դուրս չեն ելլեր։ Սահմանադրութիւնը ու հաւասարութիւնը հրատարակուելէն ի վեր Սղերդի գիւղերուն Քիւրտերը առաջուընէ աւելի հարստահարութիւններ կը գործեն, որով գիւղացիները ահ ու սարսափի մէջ կը գտնուին։ [illegible] աւազակ Պէշար Չէօօ, որ օտարներուն ալ ծանօթ է, [illegible] գիւղին Ասորիներու Մարիօ Հանա վանքին քահանան չարաչար գանակոծելէ ու շաբաթ մը բանտարկելէ ետքը, այդ վանքին [illegible] ոչխարները ու գոյքերը վերցնել տուեր է։ Գիւղացիներն ալ միեւնոյն վիճակին կ'ենթարկուին և իրենց ձայնը [illegible] դատ աւելին չեն կրնար լսելի ընել տալ։ Պէշար Չէօօ նաեւ սպաննած է [illegible] գիւղին մուխթարը՝ Իբէօ Միրզան։ Առաջնորդական փոխանորդը կը յարէ թէ իր բոլոր դիմումները ապարդիւն կը մնան. նաեւ կը խնդրէ որ եթէ նոյն գիւղին ժողովրդոց կեանքը, ինչքը ու պատիւ պահպանել կարելի չըլլայ, գէթ այդ բնակիչները կառավարութեան միջոցաւ ուրիշ տեղ մը փոխադրուին։»

—Վանէն Եէզիտիներու [illegible] հետեւեալը կը հեռագրէ Իգտամ.— [illegible] ցեղապետ [illegible] Հիւսէյնին պէս, անցեալները կուսակալութեան կողմէ տրուած հրամաններուն հակառակ, Վանէն վերադառնալու պէս [illegible] Համիտիէ հեծելազօրներէն երկու հարիւրապետներու հրամանատարութեամբ, մեր գիւղը զրկեց։ Ատոնք [illegible] տունէն չորս ժամ զէնք գործածելով, գիւղացիներէն մէկը ծանրապէս վիրաւորեցին և մեր անասունները յափշտակեցին։ Երկու գիւղացիներ ալ գերի վարելով, [illegible] պէյի տունը շղթայակապ բանտարկեցին։ Զինուորներու հալածումը ատոնք ազատեցին և անասուններուն մէկ մասն ալ ետ առնուեցան։ Այս կողմերը բնակող խեղճ Եէզիտիները [illegible] ապաստանեցին ու արդարութեան օրերուն իսկ կը հարստահարուին, եթէ դարման մը չըլլայ, ցիրուցան ըլլալով պիտի գաղթեն։ Կեանքերնիս վտանգի մէջ է և առեւտրական գործերը կեցած են։ Պէտք է զանոնք ձերբակալել ու խստիւ պատժել և յափշտակուած առարկաները ետ տալ։»

Իգտամ ցաւելով կը հրատարակէ վերոգրեալ նամակը ու հեռագիրը և կ'աւելցնէ թէ ինչ կ'ընէ Կ. Պոլսոյ մէջ կազմուած Քիւրտերու ակումբը, որ լաւ որոշումներ առած էր և ասկէ յետոյ ալ պիտի զրկէր խրատներ տալու Քիւրտերուն։ Կ. Պոլիս գտնուող Քիւրտ ցեղապետներէն մէկը իր ստացած մէկ հեռագիրը ցոյց տուեր է Իգտամի։ Այդ հեռագիրը որ Վանէն մէկ քանի [illegible] կողմէ ղրկուած է, կը վերաբերի Դաշնակցականներուն ընթացքին։ Անոնք ալ Դաշնակցականները կ'ամբաստանեն և կ'ըսեն թէ ատոնց կողմէ կազմուած խումբեր, նոյն իսկ զինուած, [illegible] կ'աշխատին իրենց կուսակցութեան պատկանողները [illegible] տալ։ Այդ մասին [illegible] կը վերագրուի Դաշնակցականներուն։ Միւս կողմէ Դաշնակցականներուն անունով սա հեռագիրը ուղղուած է Իգտամի.— «Տեղական կառավարութեան անտարբերութենէն, ամբաստանութեամբ մեծամեծներուն անպատիժ մնալէն և [illegible] տակաւին իրենց պաշտօնը շարունակելէն [illegible] կողմնակիցները բոլորովին այժմ [illegible] են։ Երկու [illegible] պաշտօններով, որոնք [illegible] համար վտարուած էին, և նոյն տեսակէն ուրիշ պաշտօնեաներ և քիւրտ ցեղապետներ [illegible] ժողովուրդին հետ միասին խորհրդակցելով, զանազան [illegible] կազմած են։ [illegible] Սահմանադրութեան դէմ [illegible] համար։ [illegible] հրատարակել ու կը գործեն և անոնց [illegible] կ'ընեն մեզ, մինչդեռ մենք [illegible] նպատակ մը չունինք, նաեւ սկսան [illegible] ցրուել և մեզի ու ժողովրդեան դէմ գործել։ Հիւսէյնի և Էմինի փաշաները իրենց տեղը վերադառնալուն պէս նորէն ձեռք անցուցին այն բնակարանները ու հողերը զորս նախապէս յափշտակած էին Թուրքերու, Հայերու և Քիւրտերու ձեռքէն և սակայն ետ առնուած էին կառավարութեան ու զինուորներու կողմէ։ Ասոնց տէրերը մեծ թիւով նորէն քաղաք փութացին բողոքելու համար։»

Վերոգրեալ հեռագիրը կը յիշէ քիչ մը վերը յիշուած Եէզիտիներու հեռագիրը և յետոյ կը յարէ.— «Նշանաւոր ոճրագործները նոյն իսկ քաղաքներու մէջ հրապարակաւ կը պտտին և անպատիժ մնալնին համարձակութիւն առնելով, կը շարունակեն իրենց ապստամբութիւնները։ Հարստահարութիւնները առանց արգելքի տեղի կ'ունենան։ Մեր այս կողմերուն վիճակը առաջուընէ աւելի յոռի է։ Մեզի դէմ յարձակումներու լուրեր առնուած ըլլալով, կը փութանք ծանուցանել թէ [illegible] ենք յետադիմականներու [illegible] և Սահմանադրութեան պաշտպանութեամբ. ուստի պէտք է այս տեղի վարչական վիճակը շուտով բարւոքել և մեծ վտանգէ մը ազատել։»

—Իգտամ ներքին գործոց նախարարութենէն կը խնդրէ որ այս հակասական լուրերուն հանդէպ ճշմարտութիւնը երեւան հանելու համար, քննիչ մարմին մը փութով կազմուի և նոյն տեղը ղրկուի։ Նոյն թերթը կը յարէ.— «Այդ մարմինը պէտք է խառն ըլլայ և վստահելի անձերէ բաղկացած։ Այդ մասին յապաղում ընդունելի չէ։ Միտքերը ցաւալի յուզումի մը չենթարկուած, անհրաժեշտ է առօր ճարը նայիլ։»

—Թանին ալ ներքին գործոց նախարարութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ Ուրֆայի Հայոց, Հայ-Հռոմէականաց և Ասորիներու կողմէ Ասորիներու պատրիարքին ուղղուած հեռագրի մը վրայ, որ արդարութիւն կը պահանջէ և կ'ըսէ թէ ժողովուրդը կը հարստահարուի, անոնց կեանքը ու ինչքը վտանգի տակ է, պաշտօնեաները անոնց [illegible] են և թէ [illegible] բաժին կը ստանան։ Թանին, [illegible] թէ ամբողջ պատասխանատուութիւնը ներքին գործոց նախարարութեան կը պատկանի և թէ նոյն նախարարութիւնը իր ըրածներուն վրայ բան մը չըսեր, կը յարէ.— «Ներքին գործոց նախարարին այս լռութիւնը ու բացակայութիւնը այս միջոցիս երկրին վնասող արարք մըն է։ Այս լռութիւնը հիմա նոյն իսկ հայրենիքին դէմ գործելու [illegible] կը համարուի, վասն զի միտքերը կը գրգռէ։ Երեսփ. ժողովին կողմէ պահանջելի հաշիւը շատ ծանր պիտի ըլլայ։»

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՍԵՆԵԱԿԸ

Յունարէն Proodos լրագիրը հետեւեալը կը գրէ.— «Յայտնի է թէ Կ. Պոլսոյ Առեւտրական Սենեակին վարչական խորհուրդին անդամները ընտրելիք քուէն ընտրողներու տասը վաճառականներուն կողմէ կ'ընտրուին և միւս տասն ալ առեւտրական ու հանրօգուտ շինութեանց նախարարութեան կողմէ։ Այս տասը ընտրողներուն ընտրութեանը մէջ առեւտրական ու հանրօգուտ շինութեանց նախարար Նորատունկեան էֆ. պէտք էր արդար համեմատութիւն մը պահպանելու աշխատելով, հպատակներու դասակարգերէն ոչ մէկին վնասել, սակայն այդ տասը հոգին հինգը՝ Հայերէն, երեքը՝ Իսլամներէն, երկուքը՝ Յոյներէն և մէկն ալ Հրեաներէն ընտրեց։ Այդ մասին դիտողութիւն ընող յոյն վաճառականներուն սա պատասխանը տուաւ.— «Ամէնքս ալ մէկ ազգին անդամներն ենք։ Այդ տեսակ բաներու համար դիտողութիւն ընելը ճիշդ չէ։» Մենք կ'ընդունինք այս պատասխանը, սակայն առեւտրական նախարարը ամէնէն առաջ ինք նկատողութեան առնելով մեր ամէնուս մէկ ազգի անդամ ըլլալը, հայ վաճառականները այս աստիճան պաշտպանելու չէր։»

ՊԷՇԻՔԹԱՇԻ ՏՐԱՄԸ

Եէնի Կազէդա նորէն կը խօսի Պէշիքթաշի ցաւալի դէպքին վրայ. խօսել կը պահանջէ կառավարութենէն որ այդ դէպքին հեղինակները ու թելադրիչները պատժուին և բուն իսկ հեղինակները, հանրային կարծիքին գոհացում մը տալու համար, եթէ Պէշիքթաշի մէջ մահու պատիժի ենթարկուին, հանրային յուզումը կատարելապէս պիտի հանդարտի։

—Թաթավլայի Յունաց Թաղական Խորհուրդը ու մութեվելին բոլորովին կը հերքեն Իսթիա անուն յունական թերթին այն լուրը թէ Թոփհանէի և ուրիշ տեղերու Յոյները, Պէշիքթաշի դէպքին առթիւ մեծ ցոյց մը կազմակերպելով, խիստ բողոքագիր մը պիտի մատուցանեն Մեծ-Եպարքոսին։

—Ոստիկանութեան նախարար Սամի փաշա, անցեալ օր, ներքին գործոց նախարարին ներկայանալով խնդրեց ընդունիլ իր հրաժարականը։ Յայտարարեց թէ դէպքին օրը Բերայի ոստիկանութեան անօրէնը ուշ ժամանակ տեղեկութիւն տուած էր իրեն և հետեւաբար ինք ալ ուշ գացած էր։

—Պատերազմական նախարարը յայտարարեց թէ զինուորական [illegible] Օսման էֆ. Պէշիքթաշի դէպքին առթիւ իր պաշտօնին մէջ թերացած ըլլալով, պիտի պատժուի ուրիշներու ալ օրինակ մը ըլլալու համար։ Օսման էֆ.ի մասին քննութիւնները առաջ կը տարուին։

—Բանտարկուած անձերէն միայն տասը հոգին համար ոչ-առժամեայ բանտարկութեան հրամանագիր տրուեցաւ։ Աւջի օրն ալ վկաներ լսուեցան։

—Պէշիքթաշի պահականոցին ոստիկաններուն ամէնքը փոխուեցան և անոնց տեղ Բերայէն ոստիկաններ ղրկուեցան, որոնք աւջի օրը գործի ձեռնարկեցին։

—Ոստիկանութեան նախարար Սամի փաշա սա յայտարարութիւնը ըրաւ Proodos խմբագիրներէն մէկին.— «Դէպքին բուն իսկ հեղինակները և անոր պատճառ եղողները բանտարկուեցան։ Քննութիւնները ու հարցաքննութիւնը կը շարունակուին։ Նախնական քննութեանց տեղեկագիրները դատարանին մէջ դատուելու պիտի յանձնուին։ Կառավարութիւնը հրապարակային պիտի ըլլայ։ Հեղինակները ամէնէն խիստ պատիժներու պիտի ենթարկուին։ Վստահ եղէք որ փութով կը գործենք։ Միայն համբերութիւն պէտք է։ Բոլոր իսլամ ժողովրդեան կողմէ ցաւ կը յայտնեմ։ Շնորհակալութիւն կը յայտնեմ Ս. Պատրիարքին՝ պէտք եղած խրատները տուած ըլլալուն համար։» Խմբագիրը հարցուց թէ միթէ այդ դէպքը յետադիմականներուն կողմէ պատրաստուած էր։ Նախարարը պատասխանեց.— «Այդ տեսակ պատճառ մը թէեւ չի կրնար [illegible], սակայն քննութեամբ հաստատուեցաւ որ դէպքին ետքը կարգ մը հայրենիքի դաւաճաններ ատկէ օգտուելու աշխատեր են։»

—Շուրայի Իւմմէդ՝ Օսմ. Բամիդէն լրագիրն ալ մահու պատիժ կը պահանջէ ոճրագործներուն համար։

—Օսմ. Բամիդէն դեկոյց մը ուղղած է յունական թերթերուն, ըսելով որ Պէշիքթաշի դէպքը արդիւնք է հին դրութեան պատկանողներու ջանքերուն՝ ազգային զանազան տարրերուն միջեւ ցրտութիւն առաջ բերելու նպատակով։

—Թաթավլայի մէջ, կիրակի օրը, յոյն բալիքճիներ հաւաքուելով Թրքուհիի մը մանէքէնը շինեցին և փողոցէ փողոց պտըտցնելով ուզեցին այրել, Պէշիքթաշի [illegible] սպանին վրէժը լուծելու համար։ Ոստիկանութիւնը իմանալով, միջոցներ ձեռք առաւ և յորդորեց ժողովուրդը որ այդպիսի ցոյցեր կատարելէ հրաժարի, որպէս զի մոլեռանդ ռէաքսիոնէրները պատրուակ չգտնեն, ծայրայեղութեանց դիմելու, ինչպէս Պէշիքթաշի մէջ։

ԴԵՍՊԱՆԱԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Ֆրանքֆուրթէր Զայդունկ, խմբագրականի մը մէջ միջազգային դեսպանախորհուրդին ծրագրին վրայ խօսելով, կ'ըսէ.— «Այդ ծրագրին պարունակած ուրիշ բաները [illegible] կը կազմեն։ Այն կէտը թէ Պերլինի դաշնագրութեան 61րդ յօդուածը, որ բարենորոգումներ կը պահանջէ Հայաստանի ու Քիւրտիստանի համար, տէրութեանց կողմէ չեղեալ պիտի նկատուի, երբ Թուրքիոյ նոր դրութիւնը այդ մասին գոհացուցիչ կանոնագրութիւններ հաստատէ, հաւանօրէն այն կարծեցեալ փոխադրութիւններէն մէկն է զոր Անգլիա ինքնիրմէ պարտաւոր կը զգայ Թուրքերուն տալու։ Այսու հանդերձ 61րդ յօդուածին տրամադրութիւնները բնաւ չգործադրուեցան և ոչ իսկ փորձեց զայն ընելու, քանի որ Ռուսիա որ և է շահ չունէր և չունի, որպէս զի գոհացում տրուի Թուրքիոյ հայկական նահանգներուն մէջ։ Ուրեմն 61րդ յօդուածին այդ տրամադրութիւնները անգործադրելի մնացած են երեսուն տարիէ ի վեր, և Կ. Պոլսոյ մէջ փոխարինութեան մը պիտի չհանդիպին դեսպանախորհուրդին կողմէ այդ մասին ըլլալիք յայտարարութիւն մը, ինչպէս նաեւ «քափիթիւլասիոն»ները և օտար նամակատուները ջնջելու խոստումին, երբ Թուրքիա տէրութեանց հետ համաձայնի նոր դաշնագրութեանց վրայ։ Մնաց որ օսմ. նոր դրութեան մարդիկը իրաւամբ այնպէս կը նկատեն թէ Օսմ. Կայսրութեան ներքին գործերուն մէջ օտար տէրութեանց միջամտութիւնը պէտք է դադրի և թէ պայմանադրական պարտաւորութիւնները այն ատեն միայն վաւերական կ'ըլլան, երբ համապատասխանեն Թուրքիոյ անկախութեանը։ Ամէն պարագայի մէջ աւելորդ է ըսել որ Գերմանիա այն ատեն միայն կրնայ մասնակցիլ դեսպանախորհուրդին, երբ Թուրքիա ու Աւստրիա-Հունգարիա ալ մասնակցին։ Այն պարագան թէ Կ. Պոլսոյ անգլիական դեսպանին կողմէ դեսպանախորհուրդին ծրագրին զեկուցումը, Անգլիոյ ու Ռուսիոյ կողմէ համախորհուրդ պատրաստուած, դժգոհութիւն պատճառած է Մեծ-Եպարքոսին, դիւրաւ կը հասկցուի, քանի որ այդ ծրագիրը Անգլիոյ կողմէ Թուրքիոյ նկատմամբ բուռն կերպով ցոյց տրուած բարեկամութիւնը ապացուցանելու հանգամանքը չունի։ Արդէն Անգլիոյ մէջ աւելի մեծ յարգ կ'ընծայեն Ռուսիոյ բարեկամութեան, և այդ բարեկամութիւնը կրնայ ըլլալ որ Թուրքիոյ սուղի նստի։»

ՀԱՄԻՏԻԷ ՀԵԾԵԼԱԶՕՐՆԵՐԸ ԱՊՍՏԱՄԲԱԾ

Վանէն առնուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ լուրի մը նայելով Համիտիէ հեծելազօրները ապստամբեր են Վանայ նահանգին մէջ։

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Եէնի Կազէդա կ'իմանայ թէ միջազգային դեսպանախորհուրդին ծրագիրը պաշտօնապէս հաղորդուեր է Բ. Դրան։

—Կայս. անձնական գանձին նախարար անուանուեցաւ մաքսային վերատեսուչ Ռաիֆ փաշա, որուն պիտի յաջորդէ [illegible] նախկին նախարար Րէշատ փաշա։

—Քաղաքապետութիւնը շրջուն խումբեր հաստատեց իր բարապաններէն և ոստիկաններէն ու ոստիկան-զինուորներէ բաղկացած։ Ասոնք փողոցները պտտող շրջուն վաճառորդները պիտի հսկեն։ [illegible] օրինական պատիժի պիտի ենթարկուին։

—Եմին Էօնիւի մէջ [illegible] անցեալ [illegible] Ունգափանի կամուրջին գլուխը պիտի փոխադրուի։

—Նախարար սենեկապետ Ֆաիգ պէյ [illegible] իր ամարանոցը [illegible] կը կատարուի, որպէս զի [illegible]։

—Իգտամ ստոյգ աղբիւրէ կ'իմանայ թէ նախարարութեան մէջ մօտերս մէկ քանի փոփոխութիւններ պիտի կատարուին։ Նախարարներէն ոմանք ուրիշ նախառարութեանց պիտի կոչուին և դուրսն երկու անձեր դաշկէներն մէջ պիտի մնան։

—Անգլիոյ դեսպանը, Անգլիոյ ու Յունաստանի անունով, փոխառութիւն մը առաջարկեր է Մեծ-Եպարքոսին։ Ըստ լուրի մը նայելով անգլիացի դրամատէրներ պատրաստ են հինգ միլիոն ոսկիի փոխառութիւն մը ընել յարմար պայմաններով։

—Քաղաքապետութեան չորս հարիւր ստորագրութիւններ մատուցուած են՝ երեսփոխանութեան ընտրելի ներկայացնելով Մեծ-Եպարքոս Քեամիլ փաշան, Սաիդ Մոլլա պէյը, Իւզաֆի նախարար Շէմսէտտին պէյը, պետական Խորհուրդին նախկին դատարանին նախկին նախագահ Սայիտ պէյը, Օսմ. Բանկէին անդամներէն Ահմէտ Րիզա պէյը, փաստաբան Մանեաստիզատէ Րէֆիք պէյը և ուրիշներ։

—Զինուորական ատեանը քննիչ կարգուեցան ոստիկանութեան պաշտօնեաներու գործառնութիւնները քննելու համար, և այսօր օրուընէ ձեռնարկեցին իրենց պաշտօնին։

— Ապահովագրական ընկերութենէ վաղեմի պաշտօնեայ Եանաքօ, որ մէկ քանի անգամ գողութեան համար բանտարկուած է, անցեալ գիշեր գինով վիճակի մէջ Կալաթա Սէրայի առջեւ գնաց և պահանջեց իրեն յանձնել Համդա անուն բանտապահը, ըսելով որ բանտին մէջ զինք ծեծած է։ Եանաքօ, տրուած խրատներուն անսաստած և ոստիկան Եօրկի էֆ.ին ալ սպառնացած ըլլալով, բանտարկուեցաւ։

— Աւստրիոյ դեսպանատան առաջին թարգմանը հարցուց արտաքին գործոց նախարարին թէ Բ. Դուռը ինչ որոշում տուած է Պոսնա-Հէրսէկի կցման խնդրոյն համար։ Նախարարը պատասխանեց թէ դեռ վերջնական որոշում մը տրուած չէ։

—Կ'ըսուի թէ Պոլսոյ Օսմ. դեսպանատան խորհրդական Թէվֆիք փաշա ոստիկանութեան նախարար պիտի անուանուի։

—Միզանի տէրը՝ Մուրատ պէյ ոչ թէ Պիթլիս, այլ իր հայրենիքը Թիֆլիս պիտի ղրկուի և Ճէմիլ Մոլլա ալ Պոսնա։

—Կ. Պոլսոյ վերաքննիչ ատեանին նախագահ անուանուեցաւ հողային գործոց տնօրէն Հաֆըզ Ալի Րիզա էֆ.։ Պատժական գործոց տնօրէն անուանուեցաւ վերաքննիչ ատեանին ընդհանուր դատախազ Նէձմէտտին պէյ, որուն յաջորդեց Մանաստըրի դատական քննիչ ատեանի դատաւոր Մուսթաֆա Նէձիմ էֆ.։

—Գերմանիոյ դեսպանը, Մեծ-Եպարքոսին հետ տեսակցելով, գրաւել տուաւ Գալէմ զաւեշտաթերթին այն թիւերը որոնք Վիլհէլմ կայսեր մէկ ծաղրանկարը կը պարունակէին։ Սակայն Մամուլի անտեսչութեան նախագահ Ջէլալ պէյի դիմումին վրայ, այդ հրամանը ետ առնուեցաւ։

—Ռուսիայէն 200 հայ գաղթականներ Սինոպ ժամաներ են։

—Կ'ըսուի թէ Եգիպտացի Հալիմ փաշայի որդին Սայիտ փաշա Կ. Պոլսոյ քաղաքապետ պիտի կարգուի։

—Երկրագործական Պանքային վերջին վիճակահանութեան չորս հազար ոսկիի առաջին պարգեւը շահող 222,171 թիւ տոմսակին մէկ ութերորդ մասին տէրերը՝ Սիլիւտար, Եէնիչէհիր, Ֆիրուզաղա Համիտիէ մասնաւոր վարժարանին տնօրէն Րէֆիք պէյ և ուսուցիչներէն տասներկու հոգի իրենց բաժինը՝ 500 ոսկի ստացան Երկրագործական Պանքայէն։

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՄԻԹԻՆԿ ՂԱԼԱԹԻՈՅ ՄԷՋ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԽՆԴՐՈՅ ՄԱՍԻՆ

Կիրակի, ժամը 7½ին անդին, Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին սրահը հաւաքուեր էր խուռն բազմութիւն մը, որուն մէջ էին գաղթականներ՝ թէ՛ երկրի ներսէն և թէ արտասահմանէն Պոլիս հասած։ Այդ օրուան միթինկին՝ կազմակերպուած Դաշնակցութեան Պոլսոյ տեղական կոմիտէին կողմէ, առնախօսութեան նիւթ պիտի ծառայէր հայ կեանքի այժմեան հրատապ և կարեւոր խնդիրներէն մէկը, գաղթականական հարցը և հայ գաղթականներու հայրենիք վերադառնալու խնդիրը։

Բուռն ծափերով ողջունուելով՝ իրարու ետեւէ բեմ ելան Դաշնակցական ընկերներ, Բարսեղ Շահեան, Փափազեան, Խաչմանեան, Շահրիկեան, և ի վերջոյ ժողովականներու պահանջումով, Է. Ակնունին, որ չնայելով իր հիւանդութեանը՝ այդ օրն ալ կարճ, բայց գեղեցիկ ճառ մը խօսեցաւ գաղթականական հարցի մասին։

Բանախօսներէն առաջին երեքը նկարագրեցին հայ գաղթականներու վիճակը, Կովկաս, Պուլկարիա, Եգիպտոս և Ամերիկայի մէջ։ Եզրակացնելով իրենց առնախօսութիւնները, որոնք կանգ առին այն հանգամանքին վրայ որ այլեւս պէտք է վերջանայ հայ արտագաղթը հայրենի բնագաւառներէն, և անհրաժեշտ է երկիրը շէնցնել, վերականգնել Հայի քայքայուած, աւերուած տնտեսական դրութիւնը, և այդ կարող է իրականանալ միայն հայ ժողովրդեան ուժերով, աշխատանքով։ Այդ նպատակով՝ մէկը մեր ամենաառաջին և մեծագոյն նպատակներէն՝ երկիր վերադառնալու են այն տասնեակ հազարաւոր Հայերը, որոնք Հին Ռեժիմի զուլումէն ազատուելու համար ցրուեր էին մինչեւ Կովկաս, Եգիպտոս, Պուլկարիա, Ամերիկա և մինչեւ անգամ Թրանսվալ։

Հայ բնագաւառներու ընդհանուր քաղաքական դրութեան բարւոքման պայմաններէն մէկն ալ դարձեալ գաղթականներու վերադարձը կը կազմէ։ Այն անտէր չարիքները, որ հայկական նահանգներու մէջ կը շարունակէին իշխել մինչեւ այսօր, պիտի վերնան և կրնան վերնալ միայն մեր ժողովուրդի հաւաքական, յամառ, տոկուն, անդուլ և անվհատ աշխատանքովը։ Եթէ մենք չկռուինք սեփական ուժով, միացած մեզի բաղդակից և մեզի վիճակակից միւս բոլոր տարրերու հետ այսօրուայ վատթար կացութեան բարձման համար, ոչ ոք զայն պիտի ընէ։ Եւ անհրաժեշտ է, որ գունդագունդ, չար ի չար Հայրենիքը թողած հեռացածները վերադառնան՝ իրենց պարտքը Երկրի Վերածնութեան ու կատարելու, վերջնական Ազատագրութեան հասունցնելու, այսինքն օգնելու համար ցեղակիցներուն և Ազատագրութեան գործին։

Չորրորդ առնախօսը ընկեր Յ. Շահրիկեան խօսեցաւ արտագաղթի ընդհանուր պատճառներուն վրայ։ Հայ արտագաղթը ներելի և մինչեւ իսկ արդարանալի կրնար նկատուիլ Հին Ռեժիմի տիրապետութեան ատեն, երբ բռնապետութիւնը քայքայելով երկրի տնտեսական կեանքի հիմերը, միեւնոյն ժամանակ կը հետեւէր Հայերու ֆիզիքական բնաջնջման և անոնք երկրի ներսէն դուրս վանելու քաղաքականութեան մը։ Այդ պայմանները վերցած են հիմա, և մեր ապագայ ջանքերով պիտի վերնան բոլորովին ու ընդմիշտ։ Գաղթականական հոսանքը այլ եւս ոչ մէկ արդարացում ունի, որովհետեւ ժողովուրդ մը գաղթականութիւններ կը հաստատէ դուրսը միայն այն ատեն, երբ բուն երկրին մէջ կը կազմէ ապառ ուժ մը. այդ պայմաններու մէջ երկիրը սեղմ կուգայ իրեն։ Բայց մենք հեռու ենք այդ դրութենէն. մեզի դեռ հարկաւոր է հիմնաւորուիլ մեր բնագաւառներուն մէջ։

Ի վերջոյ ժողովականներուն հաւանութեամբ առաջարկուեցաւ բանաձեւ մը, որ ընդունուեցաւ ջերմ ծափերով բոլորին կողմէ։ Այդ բանաձեւը կ'ըսէր որ ի նկատի ունենալով թէ արտագաղթի հոսանքը առաջնորդուած է երկրի տնտեսական քայքայման և բռնապետական ռեժիմի շնորհիւ, և որ սահմանադրական ռեժիմի հաստատումը և անոր գործադրութիւնը պիտի վերջ դնեն այդ հոսանքին, անհրաժեշտ է հրաւիրել զանազան երկիրներ գտնուող հայ գաղթականներուն հայրենիք վերադառնալ և այդ ուղղութեամբ լայն պրոպականտ ընել թէ՛ բանիւ և թէ գրաւոր՝ Հայ Մամուլի միջոցով։ Պահանջել, որ սահմանադրական կառավարութիւնը իր գանձարանի միջոցներէն գումարներ յատկացնէ հայ գաղթականներու վերադարձին համար։ Հասարակութեան միջոցով գործ հայթայթել կարօտ գաղթականներուն և ապահով դոմինք բարեգործական նպաստներով օգնելու [illegible] վիճակին։ Բանաձեւին բնագիրը մեր ձեռքին տակ չըլլալով, զայն կը հրատարակենք մեր թերթի յաջորդ թիւով։

ԱԶԳ. ԵՐԵՍՓ. ԺՈՂՈՎԻ Բ. ՆԻՍՏԸ

Պատրիարքարանէ հրաւիրագիր ղրկուեցան Ազգ. Երեսփոխանական ժողովի անդամներուն՝ գումարուելու համար ուրբաթ օր ժամը 7ին Մայր եկեղեցիի մէջ։ Օրակարգն է. Մայր Դիւանի և Կրօն. ու Քաղաք. ժողովներու ընտրութիւն. ինչպէս նաեւ պատրիարքական ընտրութեան մասին նախնական կարգադրութիւններ։

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՌԱԶՄԻԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԳԼԽՈՒՄ

Սալմաստ

Իսկ նրանց ներկայութիւնը յայտնեց սահմանագլխի այս վայրերում, որ մշտապէս ասպարէզ է դարձել քրդական աւազակութիւնների և աւարառութիւնների։ Ուր թշուառութիւն կայ, ուր հալածանք կայ՝ Դաշնակցական մարտիկի փրկարար ձեռքն է հասնում օգնութեան։

Եւ այս անգամ նրանք մի գեղեցիկ, մի կենդանի օրինակ եւս տուին ճշմարիտ Համերաշխութեան։

Մի քանի օր սրանից առաջ Բեսաղաշեան Թրքունակ գիւղն էր (մի փոքր մասը միայն հայաբնակ) քրդերի արշաւանքին ենթարկւեց։ Մօտ 30 զինուած քիւրտ ձիաւորներ նոյնքան և աւելի զինուած ոտաւորների հետ Սօմայի լեռներից իջնելով յարձակւում է Բեկալզանի նախիրի վրայ՝ նախապէս իրանց վերադարձի ճանապարհները ձորերն ու լեռները պահապանների միջոցաւ մի լաւ հսկողութեան տակ առնելուց յետոյ։ Այսպէս նրանց յաջողւում է գիւղի 110-130 գլուխ տաւարը յափշտակել տանել, Կարախաշ-Թէփէ (դուռ Թրքունակ) տաւարի մի գլխաւոր մասի հետ միասին։

Եւ ահա՛ հասա՛րն է լսւում գիւղի կողմից։

Դաշնակցական ծանօթ Խմբապետներից — գրեթէ ամբողջութեամբ Անդրանիկի զինակից-ընկերներից — Սեպուհ, Ակոբիս, Մարտիրոս և Սմբատ իրանց Ալյոշ, Արօ, Վահան, Հմայեակ և Արամ մարտիկներով անմիջապէս օգնութեան են հասնում ճիշտ այն պահին՝ երբ քրդերը տաւարը սար բարձրացնելիս են լինում։

Սկսւում է կատաղի կռիւ Դաշնակցական ռազմիկների — որոնց թիւը հազիւ 9 հոգի լինէր — և զինուած քրդերի բազմութեան միջեւ։ Հայերը խիզախօրէն արշաւում և կրակում են քրդերի վրայ, մինչ քրդերն յամառութեամբ դիմադրում են իրենց ամուր դիրքերից, բայց անկարող լինելով Դաշնակցական մարտիկների խիզախ գրոհին երկար դիմադրել, երեք-չորս անգամ հարկադրւում են իրանց դիրքերը փոխել և սար բարձրանալ։ Կռիւը հետզհետէ փոխադրւում է դէպի Բարգեճնի ճանապարհը։ Հայ մարտիկները հոս էլ շարունակում են իրանց հերոսական նախաձեռնելի պայքարը, մինչեւ որ յաջողւում նրանց քրդերին հանել դիրքերից և ցրւել, իսկ թալանւած տաւարները գրաւելով վերադարձնել տէրերին։ Կռիւը տեւում է մօտ 4 ժամ, որի միջոցին քրդերի կողմից ընկնում են 2 հոգի, 5 վիրաւոր, իսկ դաշնակցական մարտիկներից ոչ մի կորուստ։

Սրանից յետոյ աւելորդ կը լինի նկարագրել գիւղացիների ուրախութիւնը. ամէն բերան մարտիկների քաջութիւնն է գովում և նրանց անվերջ օրհնութիւններ շռայլում։ (Ռազմիկ)

ՕՍՄ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՀԱՅ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ երէկ գումարուեցաւ այն Յանձնաժողովը՝ որ պաշտօն ունի Օսմանեան Խորհրդարանի հայ անդամներուն ընտրութեան մասին կարեւոր կարգադրութիւններ և խորհրդակցութիւններ կատարելու։ Կը նախագահէր Դուրեան Սրբազան։ Յանձնաժողովը որոշեց գրել մայրաքաղաքիս Թաղ. Խորհուրդներու ատենապետներուն, հրաւիրելու համար թաղին ընտրուած երեսփոխանները, որպէս զի Օսմ. Խորհրդարանի անդամներու ընտրական գործողութեանց առթիւ, մտածել պայքարի միջոցին՝ գործակցին այն մասնաժողովին, որ քանի կարող անձնաւորութիւններէ պիտի բաղկանայ։

ԷՆՎԷՐ ՊԷՅ

ՏԱՐՍԱՆԷԼԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻԻՆ ՄԷՋ

Ազատութեան դիւցազն Էնվէր պէյ փառաւոր ընդունելութեան մը արժանացած է Տարսանէլի մէջ, ուր թէ քաղաքային և թէ զինուորական իշխանութիւնները ժողովրդեան խուռն բազմութեան մը առաջնորդութեամբ ընդ առաջ գացած են։ Էնվէր պէյ, անցեալ կիրակի առտու հասած է Տարսանէլ, և քաղաքապետութեան պաշտօնատունը ուղղուելէ վերջ այցելած է Հայոց եկեղեցին երբ դեռ չէին սկսած պատարագի արարողութիւնները։ Պրուսայի Առաջն. փոխանորդ Տ. Վարդան վրդ. Գասպարեան որ Պրուսայէն Սելանիկ գացած պատուիրակութեան կ'ուղեկցէր, և ի դարձին Տարսանէլ հանդիպած էր, կը նախագահէր նոյն միջոցին եկեղեցական արարողութեանց։ Երբ Հայասէրը տեղեկացաւ Էնվէր պէյի ժամանման, անմիջապէս եկեղեցին դուռնէն ընդունեց համբաւաւոր զինուորը և սիրալիր ողջագուրումներէ ետք, առաջնորդեց զայն իր բազմաթիւ հետեւորդներով դէպի տաճար որուն բեմէն Էնվէր պէյ Ազատութեան ճառ մը խօսեցաւ Հայ ժողովուրդին, որու կողմէ Տ. Վարդան վրդ. Գասպարեան շնորհակալութիւն յայտնեց ի վերջոյ, պարագային յարմար բանախօսութիւնով մը։

⁂ Տ. Վարդան վրդ. անցեալ կիրակի օր պատարագեր է տեղւոյն եկեղեցին մէջ, ի յիշատակ Իզմիրի աղէտին զոհուող ազգայիններու։

⁂ Էնվէր պէյ նոյն օրը մեկնած է դէպի Սելանիկ, այցելելէ վերջ նաեւ Յոյներուն և Հրեաներուն։

ՄՈՒՇԸ ՍՈՎԱՄԱՀ

ԱՇԻՐԷԹՆԵՐՈՒ ՅԱՐԱՏՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

Սահմանադրութիւնը ո՛չ մի տեսակով չազդեց արիւնարբու Աշիրէթներու և իրենց պետերու վրայ։ Աղերսագրերով լեցուած են ազգային առաջնորդարանի դարակները. մատուցուած են հանդէպ այս անդամներու չարագործութեանց. սակայն եղած բոլոր գանգ.-օրինակ բողոքներ բարձր Դրան հասած են։ Թէ Բաղէշի և թէ Մուշի կառավարութեան մէջ քանի մը հին ռեժիմի նախորդ պաշտօնեաներ կը վխտան, անոնցմէն է որ Սահմանադրական օրէնքներ [illegible]։ Աշիրէթները Խասիմ պէյը (Մշոյ դաշտի կառավար) թիւով քանի մը օր առաջ կարգ մը արդարացի բողոքներու վրայ կը ձերբակալուի. Բաղէշի մէջ սակայն 24 ժամուան բանտարկութիւն մը միայն կը կրէ և ազատ արձակուելով տուն կը վերադառնայ, և բէկ ալ հոս Մուշ եկաւ և դաշտին տանուտէրներէն մը Միչրիկի հետ ունեցած յետոյ իր 25 ձիաւոր աւազակախումբով մինչեւ ցաւ դարձեալ դէպի դաշտ՝ խեղճ գիւղացիները քամելու։ Երբ Պիթլիսի պէս կուսակալութեան մը մէջ աւազակ Խասիմ պէյ մը կը յաջողի 24 ժամէն անպատիժ դուրս գալ, հապա երեւակայեցէք թէ գաւառներու մէջ ինչե՛ր չեն ըլլար։ Բօլոխլը Հաճի Միրոյ բռնած բռնաւորին այս 15 տարի ժամանակամիջոցին՝ ամբողջ դաշտ մը մարդիկներով և կալուածներով կուլ տալէն յետոյ դեռ մինչեւ այսօր անպատիժ կը մնայ։

Մուշի և դաշտի արիւն ծծող Խալիլի տէր եղող աղաներ Փէյզերին ծանօթ՝ Սահմանադրութեան հիմնարկութեան հոսանքին հայերու [illegible] թիւններ կը տեղացնեն և ոչ ոք կայ որ համարձակի բան մը ընելու։

Ամսոյս 11ին երբ Վանէն հոս եկող Երիտասարդ Թուրքեր հրապարակաւ քարոզ կը խօսէին, մեր կեղտոտ քաղաքապետը ամենայն համարձակութեամբ Հայերու խումբի մէջ նստած՝ քանի մը Հայերու ներկայութեան կ'ըսէ.— «Դարձեալ այդ չունի՞ն են որ վազ կուտան։»

Մանազկերտէն հոս հասնող լուրերէն կը հաստատուի որ Բիզանի, Յամբէ և այլ կարգի չարագործներ որոնց արարքները անպատմելի են, քիչ քիչ կ'արդարանան։ Ներկայ կառավարական ընթացքէն յայտնի կ'երեւի որ ի մասնաւորի Բաղէշի կուսակալութեան մէջ հին ռէժիմը պիտի թագաւորէ։ Միմիայն այն ատեն կրնանք խնդրինքնիս ազատ ունենալ երբ նախ ի հիմանց փոխուին կառավարական պաշտօնէութիւնք Բաղէշի, Մշոյ և գաւառներու մէջ։ Բ. Արիւնարբու Խասիմներ, Բեղակներ և Մահմէտներ վերնան։ Գ. Բաղէշի և Մուշի մէջ գտնուող բանակալ Խալիլներու պետեր խստիւ հեռացուին։

Քանի մը տարիներէ ի վեր է որ արմտեաց սաստիկ աղքատութիւն կը տիրէ։ Անոնցմէ ձեռքերուն մէջ փճացաւ գնաց երկրագործութիւնը, ո՛չ եզ ո՛չ գութան և ոչ ալ հերկելիք դաշտեր մնացած է երկրագործներուն։ Եթէ երբեք կայ ու մնացած է իւրաքանչիւր գիւղի մէջ տուն մը, ան ալ արտով և սերմով կիսուած է քիւրտերու հետ. աղաչափատներէն ալ անպարտաւոր իրենց բաժին կը տանին, որով աղքատիկ երկրագործը՝ զոհին ուխը վրկել [illegible] տուն կը վերադառնայ անօթի։ 3—4 տարիներէ ի վեր լրագիրները կը գրեն Մշոյ երկրի սովի և սովամահներու մասին. ծծմակի պէտք չէ թուի եթէ գրենք որ այսպիսի դրութեան մէջն ալ ահա՛ կտտող տեսակ անհոգութիւն, մարդասէրներու թիւը կը շատնայ և ոչ ոք կայ որ կարեկցի այս աղքատիկ ժողովրդեան վրայ։

Թողունք անօթութիւնը և գիւղերու աստիճանական տնանկացումները, անգամ քաղաքին և Սասունի մէջ անտէր սնտրական հազարաւոր որբեր հոս ու հոն երկնցած փողոցներու մէջ սրտաշարժ արտասուքներով օդը կը թնդացնեն։ Աւետանց կամ ու Մեզր բնող երկիրը այժմ խօսական դարձած է։ Ազգի և եկեղեցւոյ սիրոյն տուն տեղ և կեանք չխնայողներ՝ հոգեւոր արդարութեան սրբուհին դատապարտուած, անօթի մորթկած, ահա՛ երկու որբանոցներ մշտախնամ ձեռքերու ներքեւ կը կարօտին կ'երթան։

Գթոտ սրտերու և ազգասէր բժշկներու ուշադրութիւնը կը հրաւիրեմ։

ՏԻՐԱՆ Մ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ԳԱՒԱՌԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ԽԱՐԲԵՐԴ

Անցեալ կիրակի և երկուշաբթի իրիկունները յաջորդաբար ունկնդրեցինք պատուական Պէյրութի Ամերիկեան բժշկական վարժարանի ուսանողներէն ընկեր Պօնափարթեանը, հայ և թուրք հայրենակիցներու խուռն բազմութեան մը հետ։ Մարտիրոս աղա Արփիարեանի ընթերցատունը, որ սկիզբէն ի վեր ազատ բանախօսութեանց միակ վայրը եղաւ, կիրակի իրիկուն լեցուած էր խուռն բազմութիւնով մը, մասնաւոր հետաքրքրութեամբ լսելու համար առաջին անգամին ըլլալով դաշնակցական պերճախօս բանախօսը։ Իր առաջին բանախօսութեան նիւթն էր «Վերջին տարուան ընթացքին Օսմ. Հայրենիքին վիճակը և եւրոպական պետութեանց քաղաքականութիւնը։»

Պէտք է խոստովանիլ թէ ընկեր Պօնափարթեան, իր հմտութեամբը, եւրոպական դիւանագիտութեան մասին իր լուրջ ծանօթութիւնովը և խօսելու արուեստին մէջ իր կարողութեամբը տիրող բեմբասաց մըն է։ Ընկեր Պօնափարթեան կրցաւ գեղեցկօրէն արտայայտել իր գաղափարները, ժամանակ իր զգացումները՝ որոնց ազդեցութեան տակ շատ հեղ լացաւ ունկնդիրներու մեծամասնութիւնը։

Նկատելէ ետք մեր Հայրենիքին երեսնամեայ արիւնոտ պատմութիւնը, անկեղծ, խորունկ շնորհակալութեան զգացումներ արտայայտեց Հին Ռէժիմը քննադատող և Թուրքիոյ մէջ ազատական վարչութեան մը բաղձացող եւրոպացի մեծ ազատախոհներու մասին։ Ցետոյ անցաւ ուղղակի եւրոպական մեծ պետութիւններուն և հատիկ հատիկ ներկայացուց անոնց ալ իրենց յատուկ դերովը այն տխուր ողբերգութեան մէջ, որ օսմանեան հայրենիքին ծնունդ գոյութեամբ շարժը խաղացին սանձը իրենց ձեռքին մէջ ունեցող այդ տէրութիւնները։ Պանծացուց Կլատսթոնի և Փրէսանսէի հայրենիքները և քննադատեց Պիզմարքի կառավարութեան այն քաղաքականութիւնը որ կեթան կուլի դիրքին մէջ դրեր էր մեր նուիրական օսմանեան հայրենիքը։ Ընկեր Պօնափարթեան չի վերագրեր ուղղամտութիւնն և յայտարարեց թէ այս բոլորը ուղղակի գերման կառավարութեան, գերման քաղաքականութեան դէմ է, չի մոռնալով Լուսաւ Պրինցիպիոնները, Բէբէլները՝ որոնք երկաթէ անգութ քաղաքականութեան այդ երկրին մէջ համոզման կարծիքի հոսանք մը կը ջանային ստեղծել ի նպաստ սահմանադրական Թուրքիոյ մը։ Որոտընդոստ ծափեր, մասնաւորապէս մեր խուլ համ հայրենակիցներէն, կ'ընդհատէին բանախօսութիւնը։

Իր երկրորդ բանախօսութիւնը նուիրուած էր ամբողջապէս Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ծրագրին, գործունէութեան և ներկայ յաղթանակին մէջ անոր խաղացած դերին։ Այս բանախօսութեան մէջ էր որ թափ հին ռէժիմին ահարկու, արհաւրալից արարքները հայ և թուրք ժողովրդին ու բոլոր տարրերուն դէմ անխտիր, հայրենիքի ծառայելու վկաներուն արիւնոտ համապատկերութիւնը բրաւ, որ ատեն ունկնդիրներու արցունքները ակամայ կը հոսէին։ Բանախօսութիւնը վերջանալուն բարձրաստիճան այրեր, պաշտօնեաներ, նոյն իսկ փաթթոցաւոր հոճաներ թափով մզուած՝ գացին համբուրել երիտասարդ բանախօսը, որուն հոգին փոխանցուած էր իրենց։

⁂

Պէհրիկեան կենտրոն է։ Իր դառնագեղը՝ ամայի ու թափուր, խեղճ դասն իրեն համար. զոյգ ոստիկաններ Առաջնորդարանի դրան վրայ կը հսկեն արգիլելու համար մէկ կողմէն իր փախուստը ու միւս կողմէն ժողովրդային վրէժխնդրութեան մը անպատեհ արտայայտութիւններ։ Երկու շաբթուան անդադրութեան ալ չէ կրցաւ փրկել զինքը, և երբ երկուան իլու, յուզումները աւելի մեծ թափով մը սատարեցան աշխարհին մէջ։ Հիմա իր հաւանութիւնը կը նոյնի. նոյն իսկ իր փառահեղ արժանապատուութիւններով եօթը հարիւր ոսկիի բաց մը կը գոյանայ, որ կը մնայ մի միայն Խաղոյ վարդապետին քսակին մէջ մնալ։

Ողբալի է վերջապէս վիճակը այս կարգի եկեղեցականներուն, բայց չէ՛ որ պատասխանատուն իրենց հասունցումը դրանելու էին հին ռէժիմին այդ անօթալի գործիչները։

Անհամբեր կը սպասենք Պատր. Փոխանորդի մը, որուն ներկայութիւնը բազմաթիւ պատճառներով անհրաժեշտութիւն մըն է։

ԻԶՄԻՐԻ ԳԱՒԱՌ. ԺՈՂՈՎԸ. — Գաւառ. ժողովոյ պակսած 9 անդամներու տեղ նորեր ընտրելու համար, Ընտրողական ժողով մը կազմուած էր, որ սկսաւ իր պաշտօնը և նախորդ կիրակի օր աւարտեց իր գործը, տեղական 9 Երեսփոխաններու ընտրութիւնը լրացնելով, հետեւաբար Իզմիրի երեսփոխանական ժողովին անդամներն են՝ Տեարք. Աբրահամ Պէրկամալեան, Աւետիս Աւետիքեան, Բարսեղ Կիւլպէնկեան, Գէորգ Խօրասանճեան, Թովմաս Թօզմաճեան, Խաչատուր Ջուրեան, Խորէն Եփրեմ, Կարապետ Աղնունեան, Կարապետ Պալապանեան, Ղուկաս Եսայեան, Մանուկ Գոճամանեան, Մանուէլ Գույումճեան, Մարգար Էլէզլեր, Մեսրոպ Սիմոնեան, Միհրան Աղնունեան, Միհրդատ Գասպարեան, Միսաք Մօրուքեան, Յակոբ Հարենց, Յակոբ Միքայէլեան, Յակոբ Վարժապետեան, Յարութիւն Իփփիրեան, Նազարէթ Ներսէսեան, Նազարէթ Պօյաճեան, Սարգիս Թողլուեան, Սահակ Դիլբերեան, Սահակ Սարաֆեան, Սերովբէ Դաւիթեան, Վահան Պարտիզպանեան և Վահան Պալապանեան։ Իսկ եկեղեցական անդամներն են. Տ. Տ. Յովհաննէս Ա. քհնյ. Մինասեան, Գաբրիէլ քհնյ. Խաչատուրեան, Յակոբ քհնյ. Տէր-Յակոբեան, Մկրտիչ քհնյ. Ասլանեան և Ղեւոնդ քհ. Մաղաքեան։ Կը մնայ միայն Թեմական Երեսփոխանի մը ընտրութիւնը Աղ-հիսարէն, որուն ընտրութեան համար հրահանգ տրուած է արդէն Ազգ. Վարչութենէն։

⁂ Իզմիրի առաջն. տեղապահ Տ. Յակոբ Աշոտ եպս. Դուրեան Սրբազանի հրահանգին համաձայն արգիլած է դիմորդներու ընտրանքը և Իզմիրի Առաջնորդ Հօր և իր կողմէ ստորագրեալ են ընտրութիւնները։

ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ. —Սկիւտարի Ս. Խաչ թաղին հինգ երեսփոխաններուն ընտրութիւնը կատարուեցաւ կիրակի օր. 410 քուէարկողներ մասնակցեցան ընտրութիւններուն։ Երեսփոխան ընտրուեցան Տեարք Յարութիւն Շահրիկեան (239), Տիգրան Ելէքճեան (235), Գաբրիէլ Տէմիրճիպաշեան (234) և Յովհաննէս Ջերագ Թորոսեան (222) քուէով։ Հինգերորդ երեսփոխանին ընտրութիւնը համեմատական մնաց։ Տեարք Պետրոս Պէրէջեկճեան (197) և Բարսեղ Աւետիսեան 157 քուէ շահեցան։ Համեմատական ընտրութիւնը պիտի կատարուի յառաջիկայ կիրակի։

ՍԿԻՒՏԱՐԻ Հայ Տիկնանց ընկերակցութիւնը իր երրորդ նիստը գումարեց հինգշաբթի օր։ Պատրաստուած ծրագիրը քուէարկութեան դրուելէ վերջ, գործադիր դիւան մը կազմուեցաւ հետեւեալ կերպով. ատենապետ՝ Տիկին Թէոդիկ, փոխ-ատենապետ՝ Օր. Դոհարիկ Փանոսեան, ատենադպիր՝ Օր. Մաննիկ Պէրպէրեան, փոխ-ատենադպիր՝ Օր. Սիրանոյշ Վարժապետեան, գանձապետ՝ Օր. Նուէմի Բրիկեան, համարակալ՝ Տիկին Աննիկ Սարաֆեան։ Նոյնպէս Տիկին Զապէլ Եսայեան, Տիկին Վարդուհի Յարութիւնեան և Օր. Պայծառ Տայեան՝ ընտրուեցան իբր խորհրդատու անդամ։

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ հոգաբարձութիւնը կը ծանուցանէ թէ հասարակութեան վաճառքին Օրթաքէօյ Մէնտէշէ փողոց 4 թիւ տունը ծախելի մնացած ըլլալով առաջարկող ի վաճառ հանել որոշուած է։ Ուստի ով որ փափաքի տունը գնել, Թաւաքալըն (6 հոկտ.) սկսեալ մինչեւ 31 օր կը հրաւիրուի դիմել հոգաբարձութեան գրասենեակը։

—Հանգուցեալ Խաչիկ էֆ. Օտեանի յուղարկաւորութեան առթիւ փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւնները եղած են.— Տէր և Տիկին Յարութիւն էֆ. Ասլանեան 216, Տէր և Տիկին Միհրան էֆ. Ասլանեան 108 դրշ։

ՍԱՄԱԹԻՈՅ Երեք Միացեալ Թաղերու Աղքատախնամ ընկերութեան հիմնադրաց ժողովը ատենէ մը ի վեր կազմալուծուած ըլլալով, նոր ընտրութեան պիտի ձեռնարկուի։ Աղքատաց հոգը՝ տարիէ մը ի վեր ստանձնող Տնօրէն Խորհուրդս փափաքելով հիմնադրաց ժողովը բառ օրինի վերակազմել, ներկայիւս կը դիմէ բոլոր աղքատասէր թաղեցիներուն, թախանձանօք խնդրելու որ հաճին յանուն հարիւրաւոր աղքատաց ներկայանալ ամէն առաւօտ ժամը 1–3 (Ք. Թ.) Աղքատախնամի գրասենեակը արձանագրելու իրենց անունը իբր բաժանորդ։ Մինչեւ յառաջիկայ շաբաթ հոկտ. 11 որուն յաջորդ օրը հոկտ. 12 ժամը 4 (Ք. Թ.) պիտի կատարուի հիմնադրաց ժողովոյ ընտրութիւնը։ Արդ կը խնդրենք որ յարգոյ թաղեցիք ընդունելով մեր սոյն հրաւէրը, հաճին անպատճառ ներկայ գտնուիլ որոշեալ օրը և որոշեալ ժամուն, ի սէր երեք թաղերու աղքատ հիւանդաց, որովհետեւ Տնօրէն Խորհուրդս իր պաշտօնավարութիւնը լրացած համարելով, գործառնութիւնները դադրեցնելով իր հրաժարականը պիտի մատուցանէ սա որ մօտ է։

Ի դիմաց Տնօրէն Խորհրդոյ

Վ. Ատենադպիր Ատենապետ

ՄԻՀՐԱՆ ՔԱՎՈՒՔՃԵԱՆ ԵՂԻՇԷ ՓԱՓԱԶԵԱՆ

2—2

ԹԱՏՐՈՆ ԲՐԹԻ-ՃԱՆ

Հինգշաբթի գիշեր ժամը 3ին (ք. ե.)

ԸՆԴ ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Ի ՆՊԱՍՏ

ՀԱՅ ԿԱՐՕՏ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ

«ԳՈՂԹԱՆ» ԲԵՐԱՅԻ ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԱՍԷՐՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԻՆ ԿՈՂՄԷ

ԱՐՇԱԿ Բ.

Ողբերգութիւն 5 արար

Հեղինակ՝ Անմահն Մ. Պէշիկթաշլեան

„ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ"

[illegible]

Փարախաճաղի Սաստիկ սարքով, դերասան ԱՌԱՔԵԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ կողմէ

Միջնարարներուն պիտի նուագէ 12 հոգինոց նուագախումբ մը Յ. ՍԻՆԱՆԵԱՆԻ առաջնորդութեամբ. ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱՐՇԸ և Հայկական զանազան երգեր

Տոմսակները կը ծախուին Բերա, Կալաթա Սէրայի քովի փողոցը 14 թիւ. տպարանը, դերձակ ԵՐՈՒԱՆԴ ՄԻՐԻՃԱՆԵԱՆԻ քով. իսկ հինգշաբթի օրը Թատրոնի կիշէն։

ԿՈՐՍՈՒԱԾ ԾՐԱՐ ՄԸ

Չորեքշաբթի իրիկուն, ժամը 10ը 50 անցած Սիրքեճիէն կամուրջ մեկնող թիւ 40 շոգենաւին մէջ մոռցուած է հայերու վերաբերեալ ծրար մը, որ ուրիշներու համար ոև է արժէք չունի։ Կարեւոր փոխարինութիւն մը կը խոստացուի գտնողին, որ պէտք է զայն յանձնէ Ղալաթիա, Գումփանին խան, թիւ 61 գրասենեակը։ 3—2

ՂԱԼԱԹԻՈՅ ՍԱԿԱՐԱՆ

6 Հոկտեմբեր 1908

Օսմ. Միացեալ փոխառութեան պարտաթուղթ		
Երէկ առաւօտ բացուեցաւ	Ղշ.	96 25
» ամէնէն վար գին	»	96 12
» » վեր »	»	97 10
» երեկոյ գոցուեցաւ	»	96 35
Բումելի Երկաթուղի		
Երէկ առաւօտ բացուեցաւ	Ֆր.	162 7/8
» ամէնէն վար գին	»	162 —
» » վեր »	»	163 1/4
» երեկոյ գոցուեցաւ	»	162 3/4

ԳԻՇԵՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՍՕՖԻԱ, 19 հոկտ.— Ֆոթի պէյ և Փէթէի պէյ, որոնք Ժէօն-Թուրքերու կողմէ Սոֆիա կը պաշտօնին, հոս հասած, բանակցելու համար Պ. Նաչէվիչի նախագահութեամբ և բոլոր կուսակցութիւններուն միացումով կազմուած քոմիթէին հետ, խորհրդակցելու համար Թուրքիոյ և Պուլկարիոյ միջեւ առկախ եղող խնդիրներու վրայ։ Այս ջանքերը բարեացակամօրէն ընդունուած ըլլալով ձեռնհաս շրջանակներու կողմէ, կը յուսացուի որ նպաստաւոր արդիւնքի մը պիտի յանգին, և այսպէս պիտի յաջողին պատրաստել գետին մը, խաղաղ համաձայնութեան մը յանգելու համար Թուրքիոյ և Պուլկարիոյ միջեւ։

ՊՈՒՏԱ ՓԷՇԹ.— Կոմս Աէրենթալ իր ընկերներուն առջեւ սա յայտարարութիւնն ըրաւ Պոսնա-Հէրսէկի մասին.— «Սխալուած ենք այդ դիմումը ընելու, որ առանց փոփոխութիւն մը մտցնելու դաշնագրին ունեցող իշխանութեան մէջ, մեր տէրութեան ամբողջութիւնը կը փրկէ։ Այն ամենալից ցոյցերը, որոնք կը կատարուին Պոսնա-Հէրսէկի մերձակայքը, փոյթով կ'ուղղուին մեր գործին պատճառաւ։ Այդ ցոյցերը ի վեր կը հանեն այն անհիմն անհանգստութիւնները, որոնց ամէն տրամադրութեան օրինաւոր կացութեան պայծառութեան մը։ Հետեւաբար անհրաժեշտ էր կանոնաւորել այդ կացութիւնը, վերջ մը դնելու համար այդ անհանգստութիւններուն, որոնց մեծ զոհողութիւններով պիտի կրնայինք դիմադրել յետոյ։ Թուրքիա, որուն վերանորոգումը մեծ համակրութեամբ կ'ողջունենք, վերահաստատ պիտի ըլլայ թէ բան մը չէ կորսնցուցած կցումով և ընդհակառակը Նէնի-Բազարի սանճագը չառած է։» Կոմսը վերջացնելով ըսաւ. «Կը յուսամք թէ կնճռոտութիւններ առաջ չպիտի գան։ Ամէն պարագայի մէջ՝ այդ յոյսը աւելի արդարացի է, ինչ որ չպիտի ըլլար, եթէ երբեք իրաց ընթացքին համեմատ ըլլայինք մեր պարտքերուն։»

ՊԵԼԿՐԱՏ. — Մայրաքաղաքին ցոյցերը կը շարունակուին։ Երկու ջոկատ զօրք ուղարկուեցաւ, իրիկուան ժամը 9ին, կարգապահութիւնը վերահաստատելու համար։

ԳԱՀԻՐԷ.— «Օսմ. Համերաշխութեան Ընկերակցութիւն»ը մանիֆէսթ մը հրատարակեց, աւստրիական ապրանքներու դէմ պոյքօթաժ պահանջելով։

ՓՈՒԹԱՑԷՔ ԵՒ ՕԳՏՈՒԵՑԷՔ

ԲԱՑՍՈՒԿ ԱՌԻԹ

Վերջնական վաճառում սփռոցներու, կիներու եւ տղոց յատուկ զգեստեղէններու մեծ մթերքի մը, որ եւրոպական առեւտրական տունէ մը շատ աժան գնուած է։

Ղալաթիա, թիւ 2, Թիւնէլին մօտ

Բոլոր ապրանքները պիտի ծախուին %ին 40 զեղչով՝ նշանակուած գիներուն վրայ։ Եզական առիթ մըն է որ կը ներկայանայ հասարակութեան և ամէն պէտք է օգտուի այս ճշմարիտ լիքուիտասիոնէն։ Արդէն իսկ մեծ բազմութիւն մը կը դիմէ, օգտուելու համար այս վաճառումէն։ Ճիշդ առիթն է պատեհութենէն օգտուելու։ 12—6

Վաճառատունը պիտի փակուի նոյեմ. 15ին

ՍԻՆԿԷՐ

ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ

THE SINGER MANUFACTURING Cie.

Սինկէրի կարի մեքենաները շատ անգլ. պաշտպանէ շինուած ըլլալով, իրենց ամրութեամբ այնքան գնահատուած են, որ աշխարհիս ամէն կողմը տարածուած են և բոլոր ընտանիքները, դերձակներն ու կօշկակարները լոկ Սինկէրի մեքենայ սկսած են գործածել։ Սինկէր Ընկերութիւնը ցարդ 490է աւելի պատուոյ վկայական և շքադրամ ստացած է բոլոր ցուցահանդէսներէն։

Մասնաճիւղեր բովանդակ Թուրքիոյ մէջ։

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատուններուն մէջ։

Բերա 1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դիմաց թիւ 343 և 343 կրկին։
2. » » Գալաթա Սէրայի դիմաց։

Ղալաթա 1. Սինկէր խան Թիւնէլի առջեւ։
2. Թրամվայի կայարանին դիմաց։

Պոլիս 1. Սուլթան Համամ թիւ 2։
2. Սուլթան Պայազիտ, Թրամվայի կայարանին դիմաց թիւ 13։

Սկիւտար Զարըր Պէյլ, թիւ 120։

Դասերը և նորագոյնութիւնները ձրի։ Սինկէր Ընկերութեան կեդր. վարչատունին մէջ գտնուած Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և 343 կրկին, Սարգիս պէյ Ճիւղ Օղլուի տունը։ 16 50—9

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՆՔԱՅԻՆ

ՆՈՐ ՅԱՅՏԱԳԻՐ

Կայս. կառավարութեան բարձր հովանիին տակ ապաստանող գաղթականներու գետեղման ծախքին համար Երկրագործական Պանքային կողմէ կազմակերպուած վիճակահանութիւնը այսուհետեւ ամէն ամսոյ սկիզբը պիտի կատարուի։ Պարգեւ չշահող տոմսակները ամբողջ տարի մը պիտի կրնան մասնակցիլ վիճակահանութեանց։ Ամբողջ տոմսակներու արժէքին հարիւրին եօթանասունհինգը պարգեւներու և ամորթիններու պիտի յատկացուի։ Ուստի սոյն վիճակահանութիւնը հանրօգուտ կերպով բարեփոխուած է։ Նոր կազմակերպութեամբ՝ տոմսակներուն թիւը պիտի ըլլայ 250,000, և անոնցմէ 62,500 թիւ պարգեւ ու ամորթի պիտի շահին։ Ինչպէս կ'երեւի սոյն հրատարակուած յայտագրէն, մեծ պարգեւը 12,000 ոսկի է, և անկէ զատ՝ երկու, երեք, չորս, հինգ և վեց հազար ոսկիի նշանաւոր պարգեւներ ալ կան։ Տոմսակները զանազան առքուվաճառումներ ունին. ամբողջ, կէս, մէկ քառորդ և մէկ ութերորդ։ Ամբողջ տոմսակին գին նշանակուած է երկու օսմ. ոսկի, կէսին՝ մէկ օսմ. ոսկի, քառորդին՝ կէս օսմ. ոսկի և մէկ ութերորդին՝ մէկ քառորդ օսմ. ոսկի։ Տոմսակ գնողներուն դիւրութիւն մը ըլլալու համար՝ կէս, քառորդ և մէկ ութերորդ տոմսակներուն մէկ մասը չորս թիրաժի յատուկ երեքական կտրի բաժնուած է։ Ցրչեալ կտրական տոմսակները՝ մէհրաբէն 19 դրուշի հաշուով՝ կէս տոմսակներուն գինը 72 դրուշ է, մէկ քառորդինը՝ 36 դրուշ, իսկ մէկ ութերորդինը՝ 18 դրուշ։ Երկրագործական Պանքայի կեդրոնատեղիէն և կամուրջին գլուխը գտնուող մասնաճիւղէն անմիջապէս տոմսակ գնողներուն հետեւեալ զեղչերը պիտի ըլլան. մէկ անգամէն 10 ոսկիի տոմսակ գնողներուն՝ %ին 7. մէկ տարուան ժամանակամիջոցին՝ 1001 ոսկիի տոմսակ գնողներուն %ին 8, 2001 ոսկիի տոմսակ գնողներուն՝ %ին 9, 3001 ոսկիի տոմսակ գնողներուն՝ %ին 10ը, և 10,001 ոսկիի տոմսակ գնողներուն՝ %ին 12։ Ութերորդ թիրաժը պիտի կատարուի 1324 հոկտ. 1ին, Հանրօգուտ Շինութեանց Նախարարութեան պաշտօնատան մէջ, ի ներկայութեան Պանքայի Վարչական Խորհուրդի անդամներուն, հաշուակալին և նօտարին, հաշուակալութեանց Ատեանին և Օսմ. Կայս. Պանքայի կողմէ կարգուած պաշտօնեաներէ կազմուած մասնաւոր մարմնոյ մը։

1324 տարուան յատուկ Երկրագործական Պանքային վիճակահանութեան յայտագիրը

Ա. ԹԻՐԱԺ (Մարտի սկիզբը)

Հատ	Ոսկին 100էն	Հնգումար.
1	600000	600000
1	200000	200000
1	100000	100000
2	40000	80000
5	20000	100000
15	10000	150000
50	4000	200000
275	400	110000
3150	200	630000
3500		2170000

Բ. ԹԻՐԱԺ (Ապրիլի սկիզբը)

Հատ	Ոսկին 100էն	Հնգումար.
1	300000	300000
1	100000	100000
3	40000	120000
5	20000	100000
15	10000	150000
50	4000	200000
275	400	110000
3150	200	630000
3500		1710000

Գ. ԹԻՐԱԺ (Մայիսի սկիզբը)

Հատ	Ոսկին 100էն	Հնգմր.
1	300000	300000
1	100000	100000
3	40000	120000
5	20000	100000
15	10000	150000
50	4000	200000
275	400	110000
3150	200	630000
3500		1710000

Դ. ԹԻՐԱԺ (Յունիսի սկիզբը)

Հատ	Ոսկին 100էն	Հնգմր.
1	300000	300000
1	100000	100000
3	40000	120000
5	20000	100000
15	10000	150000
50	4000	200000
275	400	110000
3150	200	630000
3500		1710000

Ե. ԹԻՐԱԺ (Յուլիսի սկիզբը)

Հատ	Ոսկին 100էն	Հնգմր.
1	300000	300000
1	100000	100000
3	40000	120000
5	20000	100000
15	10000	150000
50	4000	200000
275	400	110000
3150	200	630000
3500		1710000

Զ. ԹԻՐԱԺ (Օգոստոսի սկիզբը)

Հատ	Ոսկին 100էն	Հնգմր.
1	400000	400000
1	100000	100000
3	40000	120000
5	20000	100000
15	10000	150000
50	4000	200000
275	400	110000
3150	200	630000
3500		1810000

Է. ԹԻՐԱԺ (Սեպտ.ի սկիզբը)

Հատ	Ոսկին 100էն	Հնգմր.
1	400000	400000
1	100000	100000
3	40000	120000
5	20000	100000
15	10000	150000
50	4000	200000
275	400	110000
3150	200	630000
3500		1810000

Ը. ԹԻՐԱԺ (Հոկտեմբ.ի սկիզբը)

Հատ	Ոսկին 100էն	Հնգմր.
1	400000	400000
1	100000	100000
3	40000	120000
5	20000	100000
15	10000	150000
50	4000	200000
275	400	110000
3150	200	630000
3500		1810000

Թ. ԹԻՐԱԺ (Նոյեմբերի սկիզբը)

Հատ	Ոսկին 100էն	Հնգմր.
1	400000	400000
1	100000	100000
3	40000	120000
5	20000	100000
15	10000	150000
50	4000	200000
275	400	110000
3150	200	630000
3500		1810000

Ժ. ԹԻՐԱԺ (Դեկտ.ի սկիզբը)

Հատ	Ոսկին 100էն	Հնգմր.
1	500000	500000
1	200000	200000
1	100000	100000
2	40000	80000
5	20000	100000
15	10000	150000
50	4000	200000
275	400	110000
3150	200	630000
3500		2070000

ԺԱ. ԹԻՐԱԺ (Յունվ.ի սկիզբը)

Հատ	Ոսկին 100էն	Հնգմր.
1	600000	600000
1	200000	200000
1	100000	100000
2	40000	80000
5	20000	100000
15	10000	150000
50	4000	200000
275	400	110000
3150	200	630000
3500		2170000

ԺԲ. ԹԻՐԱԺ (Փետրվ.ի սկիզբը)

Հատ	Ոսկին 100էն	Հնգմր.
1	1200000	1200000
1	500000	500000
1	400000	400000
1	300000	300000
1	200000	200000
10	100000	1000000
20	40000	800000
65	20000	1300000
300	10000	3000000
750	4000	3000000
1250	800	1000000
21600	200	4320000
24000		17020000

ՀԱՍՈՅԹ

	Ոսկին 100էն
Ուրախանալիքը երկու օսմ. ոսկիի արժէքով շրջաբերութեան հանուած երկու հարիւր յիսուն հազար տոմսակներուն փոխարժէքը	50,000,000
	50,000,000

ԾԱԽՔ

	Ոսկին 100էն
Շահող թիւերուն համար տրուելիք հարիւրին 75ը	37,510,000
Գաղթականներու Յանձնաժողովին պատկանած հարիւրին 17ը	8,500,000
Ծախսի և վարչութեան ծախքերուն փոխարժէքը եղող հարիւրին 8ը	3,990,000
	50,000,000

ՄՈԽՐԱՋՈՒՐԻ ՊԷՏՔ ՉԿԱՅ

ՈՐ ԿԸ ՓՏԵՑՆԷ ՃԵՐՄԱԿԵՂԷՆԸ ԱՅԼ

ՎԱՐԷՔԻՆԱՅԻ

ՈՐ ՆՈՐ ԿԸ ՊԱՀԷ ՃԱՅՆ

Դիւս իտալացի նշանաւոր քիմիագէտ Հէրքիւլ Ռամարինիի

75% խնայողութիւն!!! Մեծ դիւրութիւն, կատարեալ մաքրութիւն եւ ճերմկութիւն,

ԱՆԹԵՐԻ ՀԱԿԱՆԵԽՈՒՄ

ՍԹԻՒ ՓՈՐՁԷՔ՝ ԴՈՒՔ ԱԼ ՊԻՏԻ ՀԱՄՈԶՈՒԻՔ

Բանի մը մրցանակներ ստացած է զանազան ցուցահանդէսներէ, վկայագիրներ՝ զանազան կաճառներէ, տեղեկագիր պալատան քիմիագէտ Պ. Սինկրոսէ և կայս. բժշկական վարժարանի բրօֆէսէօր Տօքթ. Ճէլալեանէ։

ԲՈԼՈՐ ՆՊԱՐԱՎԱՃԱՌՆԵՐՈՒՆ ԵՒ ՓՈՍԹՐԱԹԻՒԼԻ ՔՈՎ ԿԸ ԳՏՆՈՒԻ

Միակ ներկայացուցիչ Թուրքիոյ եւ Պուլկարիոյ համար

ԲԱՐԱՆԵՕԱՆՆՈՒ, ՔՕԼԱՍԻ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Պաղտաս խան, թիւ 7, Կ. Պոլիս

ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ ԿԸ ՓՆՏՌՈՒԻՆ ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՄԷՋ 50—15

ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱ

Վիճակ 30 յունիսի 1908

ՊԱՀԱՆՋՔ	Օսմ. Ոսկի
Բաժնեգլուխ չդանձուած	5,500,000 —
Սնտուկ ի Կ. Պոլիս	4,265,495 34
Պետական արժէթուղթք	1,205,546 61
Զանազան արժէթուղթք	2,577,660 07
Գանձելի փոխանակագիրք	3,391,618 14
Ընթացիկ հաշիւք Կայս. Գանձուն — պարտականք	2,236,259 06
Ընթացիկ հաշիւք զանազանք — պարտականք	2,771,379 42
Փոխատուութիւնք արժէթղթոց եւ վաճառաց	5,175,707 57
Անշարժ եւ շարժուն գոյք	292,652 44
Զանազանք	50,443 78
	27,466,762 43

ՊԱՐՏՔ	
Դրամագլուխ	11,000,000 —
Պահեստամաք ի շրջաբերութեան ի Կ. Պոլիս եւ ի մասնաճիւղս	1,019,672 —
Վճարելի փոխանակագիրք	1,227,675 34
Ընթացիկ հաշիւք զանազանք — պահանջողք	1,538,310 07
Դրամական աւանդք որոշ պայմանաժամով	10,757,709 48
Վճարելի շահաբաժինք	500,161 34
Կանոնական պահեստ	1,098,012 —
Զանազանք	355,222 20
	27,466,762 43

Վաւերացեալ ճշդութիւնն բուս ցուցոյս

Տնօրէն	Հաշուակալ	Ընդհ. Տնօրէն
Ա. ՊԱՆՃԻՐԻ	Օ. ՊՐԱՆՏ	Ա. ՆԻԱՍ

ՇԻՐՔԷԹԸ ԽԱՅՐԻՅԷ

Շիրքէթի խայրիյէնին 18 վէ 20 նումէրօլու վափօրլարը իլէ 15 վէ 25 նումէրօլու վափօրլար Թէքնէսինին պիլմիւզայէտէ ֆիրուխթ խուլէնէկի ճիհէթլէ իլթիհասըն Թալիպ օլանլարըն վէ տահա զիյատէ մալիւմաթ ալմաղ իսթէյէնլէրին Շիրքէթը միւքիւրէ խարէկինէ միւրաճաաթ իյլէմիլէրի իլան օլունուր։

2 Թըշրինի էվվէլ 1324 1

ՔԱՌԱՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐԷ Ի ՎԵՐ ՃԱՆՉՑՈՒԱԾ Է

Միլքմէյտ Պրէնտ Սուիս Միլք

ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՍՆՈՒՆԴՆ Է

Ամեն անոնք որ գործածած են այս կաթը՝ կ'ընդունին որ

ՄԻԼՔՄԷՅՏ ՊՐԷՆՏ ՍՈՒԻՍ ՄԻԼՔԸ

ԼԱՒԱԳՈՅՆՆ Է ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

ԿԵՆՍԱՆԱՆ՝ ՆԵՐԱԿՈՒՐԻ ՀԱՄԱՐ

ԵՒ ԱՄԷՆՈՒՆ ԱԼ ՕԳՏԱԿԱՐ

50—31

Khedivial Mail Line

(Քէտիվիալ Մէյլ Լայն)

Շոգենաւային Ընկերութիւն

Շաբաթական ամենէն արագ երթեւեկը Պոլսոյ եւ Աղեքսանդրիոյ միջեւ

ՍԵՒ ԾՈՎԻ ԳԻԾ

Արագ երթեւեկ Կ. Պոլսոյ եւ Տրապիզոնի միջեւ

«Մէնզալէ» շոգենաւը, հինգշաբթի, 22 հոկտ., իրիկուան ժամը 3ին պիտի մեկնի Տրապիզոն, հանդիպելով Ինէպոլի, Սամսոն, Օրտու, Կիրասոն և Րիզէ։

Տեղեկութեանց համար դիմել Ընկերութեան կեդրոնատեղին, Ղալաթիա, քառակուսի վրայ, Մէրքէզ Րըհթիմ խան, եւ կամ Ստամպօլ, Փոստա, Վալիտէ Սուլթան խան։

ՕՍՄ. ԿԱՅՍ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՊԱՂՏԱՏԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՒՆ

Ժամանակացոյց կոխմբ.երու երթեւեկին.

1908 սեպտեմբեր 14 (Ն. Տ.) Բշ. օրէն սկսեալ

ՔՈՆԻԱ — ԷՐԷԿԼԻ — ՊՈՒԼԿՈՒՐԼՈՒԻ ԳԻԾ

ԵՐԹ		Կոխմբ. 629 Ապր. եւ Ճմբ. Առաւ.
Կայարան		
Գոնիա	մկն.	12 30
Գայէն խան		1 01
Ջումրա		1 45
Արըգ Էօրէն		2 13
Մանտասուն		2 42
Գարաման	ժմն.	3 13
	մկն.	3 28
Սիտրօվա		3 54
Այրանճը-Տէրպէնտ		4 44
Ալանճա		5 20
Էրէյլի	ժմն.	5 45
	մկն.	6 05
Պուլկուրլու իրիկուն	ժմն.	6 20

ԴԱՐՁ		Կոխմբ. 621 Ապր. եւ Ճմբ Իրիկուն
Կայարան		
Պուլկուրլու	մկն.	6 35
Էրէյլի	ժմն.	6 53
	մկն.	8 50
Ալանճա		9 17
Այրանճա-Տէրպէնտ		10 01
Սիտրօվա		10 43
Գարաման	ժմն.	11 07
	մկն.	11 22
Մանտասուն		11 55
Արըգ Էօրէն		12 24
Ջումրա		1 —
Գայէն խան		1 36
Գոնիա իրիկուն	ժմն.	2 05

50—21

ՕՍՄ. ՀԱՆՐ. ՊԱՐՏՔԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Օսմ. Հանր. Պարտքի Վարչական Խորհուրդը կը ծանուցանէ թէ 1908 սեպտ. 1/14էն սկսեալ, հարիւրին երկու (2%) տոկոս մը պիտի վճարուի Միացեալ Պարտքի պարտաթուղթերու թիւ 10 կտրօնին համար։ Տոկոսներու վճարումները պիտի կատարուին կտրօնին վրայ նշանակուած քաղաքներուն մէջ մինչեւ 1909 յուն. 31/13 փետր.։ Այդ պայմանաժամը անցնելէ յետոյ Կ. Պոլսոյ մէջ միայն վճարելի պիտի ըլլան։ 12—5

Կ. Պոլիս, 18/31 օգոս. 1908

ՕՍՄ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՀ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆԵԱԼ՝ ՎԵՀ. ՍՈՒԼԹԱՆԻՆ

1892 Օգոստ. 2/14 եւ 1320 Մարտ 20 թուականի Ֆէրմանով

Դիմել Ընկերութեան կեդր. գրասենեակը, Ղալաթիա, Նաղըր խան, Հէզարէն փողոց, թիւ 14, Քօօբէրաթիվ վաճառատան դիմաց, կամ հետեւեալ հասցէներուն.

Պոլիս, մասնաճիւղ Օսմ. Կայս. Պանքայի Եէնի Ճամիի հրապարակ.

Պոլիս, Մ. Ի. Սասօր, Շէյխ իւլ Իսլամ խան, Պահճէ Գաբու թիւ 10.

Պոլիս, Աստուր պէյ և Ընկ. Վէզնէճիլէր փողոց.

Պոլիս, Գ. Ս. Այմէլօղլու, Էմին-Էօնիւ, Պահչէ Գաբու Իզմիր փողոց.

Գատըգիւղ, Ալեքսանդր Անաստասիատիս շուկայի հրապարակ.

Գատըգիւղ, Մ. Ս. Անդրիա, Մօտա ճամբէջի.

Պէօյիւքտէրէ, Մ. Ա. Տէմարքի.

Բերա, Մասնաճիւղ Օսմ. Կայս. Պանքայի Մեծ Փողոց.

Շիշլի, Մ. Ի. Ռոսի, Պէօյիւքտէրէ ճամբէջի, թիւ 137.

Ղալաթիա, Մ. Ա. Բիրեանց, թիւ 12 Թիւնէլ խան.

Մեծ կղզի, Բէյուսլ էֆ.

Մաքրիգիւղ, Մ. Ա. Անկէյիտէս, կայարանի հրապարակ.

Սան Սթէֆանօ, Քէչէճեան էֆ.

17 Գործակալութիւնք օսմ. գլխաւոր քաղաքաց մէջ։

ԱՆԱՏՈԼԸԻ ՕՍՄ. ԵՐԿԱԹՈՒՂԻ

Երթեւեկութիւն կառախումբերու 1908 սեպտեմբեր 14 (Ն. Տ.) երկուշաբթի օրէն սկսեալ

ԷՍԿԻ ՇԷՀԻՐ - ՔՈՆԻԱ

ԵՐԹ Կառք. 223 խառն Առ. Ժ. Վ.		ԿԱՅԱՐԱՆ		ԴԱՐՁ Կառք. 224 խառն Իրկ. Ժ. Վ.
12 —	մկն.	Էսկի-Շէհիր	ժմն.	3 —
12 42	»	Կէօքճէ Քըրըք	մկն.	2 20
1 39	»	Սապանճը Բունար	»	1 38
2 33	»	Ալաեունտ	»	12 42
3 14	»	Չէքիւրլէր	»	11 53
4 11	»	Տէօյէր	»	11 05
4 40	»	Իհսանիյէ	»	10 20
5 04	»	Համամ	»	9 53
5 14	»	Կազլըկէօյ համամ	»	9 44
5 41	ժմն.	Աֆ. Գարա Հիսար	մկն.	9 13
6 01	մկն.	Աֆ. Գարա Հիսար	ժմն.	8 53
6 41	»	Պէօյիւք Չօպանլար	»	8 20
7 36	»	Չայ	»	7 33
8 21	»	Իսհագլու	»	6 40
8 45	»	Ախսարան	»	6 15
9 16	»	Աք Չէհիր	»	5 53
9 48	»	Աղարի քէօյ	»	5 13
10 30	»	Ջավուշճը քէօյ	»	4 35
11 08	»	Իլկին	»	4 03
11 55	»	Գատըն-Խանը	»	3 09
12 50	»	Սէրայ-Էնի	»	2 27
1 22	»	Մէյտան	»	1 47
2 22	»	Բունար-Պաշը	»	12 42
3 —	ժմն.	Գոնիա	մկն.	12 —
Իրիկ.				Առտ.

ԷՍԿԻ ՇԷՀԻՐ - ԷՆԿԻՒՐԻ

ԵՐԹ Կառք. 122 խառն Առ. Ժ. Վ.		ԿԱՅԱՐԱՆ		ԴԱՐՁ Կառք. 121 խառն Իրկ. Ժ. Վ.
1 —	մկն.	Էսկի Շէհիր	ժմն.	11 —
1 44	»	Աք Բունար	մկն.	10 18
2 24	»	Ալբիւ Քէօյ	»	9 46
3 4	»	Պէյլիք Ախըր	»	8 58
4 9	»	Սարըքէօյ	»	8 1
4 58	»	Պիչէր	»	7 4
5 35	»	Սաարլէր	»	6 27
6 9	»	Պէյլիք Քէօփրիւ	»	6 —
7 3	»	Բօլաթլը	»	5 16
8 21	»	Մալը Քէօյ	»	3 49
9 15	»	Սէնճան Քէօյ	»	2 47
10 —	ժմն.	Էնկիւրիւ	մկն.	2 —
Իրիկ.				Առտ.

ՀԱՄԻՏԻԷ - ԱՏԱԲԱԶԱՐ

ԵՐԹ Կառք 424 խառն Իրկ. Ժ. Վ.		ԿԱՅԱՐԱՆ		ԴԱՐՁ Կառք. 421 խառն Առ. Ժ. Վ.
7 15	մկն.	Համիտիէ	ժմն.	5 03
7 33	ժմն.	Ատա-Բազար	մկն.	4 45

ԱԼԱԵՈՒՆՏ - ՔԷՕԹԱՀԻԱ

ԵՐԹ	Կռ. 322 խռ. Առ.	324 խռ. Իր.
Կայարան	Ժ. Վ.	Ժ. Վ.
Ալաեունտ մկն.	2 35	12 45
Քէօթահիա ժմն.	2 55	1 05

ԴԱՐՁ	Կռ. 321 խռ. Առ.	323 խռ. Իր.
Կայարան	Ժ. Վ.	Ժ. Վ.
Քէօթահիա մկն.	2 —	12 05
Ալաեունտ ժմն.	1 40	11 45

ՀԱՅՏԱՐ ՓԱՇԱ — ԷՍԿԻՇԷՀԻՐ

ԵՐԹ Կառ. Թ. 44 խռ. Ժ. Վ.	Թ. 46 խռ. Ժ. Վ.		ԿԱՅԱՐԱՆ		Կառ. ԴԱՐՁ Թ. 41 խռ. Ժ. Վ.	Թ. 43 խռ. Ժ. Վ.
առ. 12 32	իր. 7 45	մկն.	Քատըքէօյ կամուրջ	ժմն.	4 44 առ.	11 55 իր.
12 52	8 05	ժմն.	Հայտար Փաշա	մկն.	4 24	11 15
1 22	8 15	մկն.	» »	ժմն.	4 12	10 54
2 37	9 29	ժմն.	Բէնտիք	մկն.	2 58	9 50
2 45	9 40	մկն.	»	ժմն.	2 44	9 39
3 06	10 01	»	Թուզլա	մկն.	2 24	9 17
3 28	10 24	»	Կէպզէ	»	2 02	8 55
3 05	10 48	»	Տիլ Իսքէլէսի	»	1 33	8 26
4 —	10 58	»	Թավշանճըլ	»	1 19	8 16
4 16	11 17	»	Հէրէքէ	»	1 08	8 06
4 37	11 39	»	Եարըմճա	»	12 41	7 42
4 49	11 51	»	Թիւթիւն Չիֆթլիք	»	12 29	7 30
4 59	12 02	»	Տէրինճէ	»	12 18	7 21
5 13	12 18	ժմն.	Իզմիտ	մկն.	12 —	7 06
5 38		մկն.	»	ժմն.		6 41
6 11		»	Պէօյիւք Տէրպէնտ	մկն.		6 10
6 39		»	Սապանճա	»		5 41
7 03		»	Համիտիէ	»		5 25
7 44		»	Կէյվէ	»		4 32
8 04		»	Աք Հիսար	»		4 10
8 33		»	Մէքէճէ	»		3 45
8 57		»	Լէֆքէ	»		3 13
9 32		»	Վէզիր Խան	»		2 38
10 12		ժմն.	Պիլէճիկ	մկն.		2 02
10 24		մկն.	»	ժմն.		1 50
11 32		»	Գարաքէօյ	մկն.		1 —
12 13		»	Պօզէիւք	»		12 24
12 59		»	Ին Էօնիւ	»		11 48
1 29		»	Չուքուր Հիսար	»		11 16
իր. 2 07		ժմն.	Էսկի Շէհիր	»		10 40 առ.

ԹՈՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Ընդմէջ Հըլի, Կ. Պոլսոյ եւ Օտեսայի

Նաւերը	Թոնօ	Նաւերը	Թոնօ	Նաւերը	Թոնօ	Նաւերը	Թոնօ	Նաւերը	Թոնօ
Ալպանօ	1069	[illegible]	1311	Հիտալկօ	1581	[illegible]	3709	[illegible]	1119
[illegible]	3307	[illegible]	923	[illegible]	3720	[illegible]	3557	[illegible]	1735
Անճէլօ	1541	[illegible]	2338	[illegible]	1600	Միլօ	1057	[illegible]	119
[illegible]	2277	[illegible]	1718	[illegible]	695	[illegible]		[illegible]	1203
[illegible]	1822	[illegible]	504	[illegible]	2354	[illegible]	3419	[illegible]	1323
[illegible]	1264	[illegible]	3464	[illegible]	6540	[illegible]	1983	[illegible]	1546
[illegible]	4481	[illegible]	1529	[illegible]	1080	[illegible]	4100	[illegible]	3327
[illegible]	1871	[illegible]	1841	[illegible]	1058	[illegible]	4036	[illegible]	1470
[illegible]	1837	[illegible]	954	[illegible]	2807	[illegible]	1595	[illegible]	242
[illegible]	1244	[illegible]	1828	[illegible]	1700	[illegible]	1637	[illegible]	1914
[illegible]	1094	[illegible]	349	Լէօ	1053	[illegible]	510	[illegible]	1989
[illegible]	2729	[illegible]	1582	[illegible]	2272	[illegible]	3329	[illegible]	2891
[illegible]	1831	[illegible]	3060	[illegible]	1648	[illegible]	1558	[illegible]	1850
[illegible]	4235	[illegible]	1143	[illegible]	3191	[illegible]	1513	[illegible]	1200
[illegible]	3005	[illegible]	1011	[illegible]	724	[illegible]	1729	[illegible]	
[illegible]	896	[illegible]	1585	[illegible]	1273	[illegible]	136	[illegible]	

Ընդհանուր գործակալ Հըլի եւ [illegible]

Քօլէնզօ շոգենաւը, նաւապետ Պրանթըն։

Ընդհանուր գործակալ Հըլի եւ [illegible]

Թոֆիօ շոգենաւը, նաւապետ Ցարն, հոկ. 1ին, Բէօսթէնճէ և Օտեսա։

Դիմել Գործակալներուն՝ Տ. ՀԻՂՏ ԷՆՐԻՔՕՏ

Թիւ 22-24, Մէրքէզ Րըհթիմ խան, Ղալաթիա 10 50—7

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՍՆՏՈՒԿ

ՎԻՆԸՐ ՊԱՆՔ - ՖԷՐԱՅՆ

ԿՊ. ՊՈԼՍՈՅ ՄԱՍՆԱՃԻՒՂ

ՂԱԼԱԹԻԱ ԵՒ ՊՈԼԻՍ

Դրամագլուխ 130 միլիոն քուրոն, ամբողջովին վճարուած։

Պահեստի գումարներ 38,000,000 քուրոնի չափ։

ԴԻՒՐԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Վճարումները ոսկեդրամով ըլլալու են։ Ծխուն դրոշմէն վեր վճարում չընդունուիր։

Վիէնըր Պանք-Ֆէրայն այսօր հարիւրին 3½ տոկոս կը վճարէ 1000 ոսկիէն վար գումարներու համար, իսկ անկէ աւելի գումարներու համար՝ հարիւրին 3։ Ամէն կրնայ տոկոսին ոսկի իրենցնել կամ ունեցնել տեղական լրագիրներու միջոցաւ 15 օր առաջ խմաց տալէ յետոյ։

100 ոսկիէն վար գումարները կրնան ետ առնուիլ ամէն ատեն։

100 ոսկիէն վեր գումարները կրնան ետ առնուիլ գրաւորապէս ու կանխաւ ըլլալիք ազդարարութենէ մը յետոյ, հետեւեալ կերպով.

3 օր 100- 150 ոսկի գումարի համար
6 » 151- 200 » » »
10 » 201- 500 » » »
15 » 501-1000 » » »
30 » 1001 և անկէ վեր » »

Վիէնըր Պանք-Ֆէրայն իրեն կը վերապահէ պահելու դրամ ունեցողներուն հաշիւը կարգադրել, ուզած ատենն վճարելով տեղական պարտականքն գումարը։

Վիէնըր Պանք-Ֆէրայն խնայուած գումարը պարտականող տեսակ ալ կը յանձնէ անշափահասի անունով, բայց այդ պարագային, նշանակուած խնամակալը (վէլի կամ վասի) միայն իրաւունք ունի դրամը քաշելու։ 50—16

Խնայողական Սնտուկէն զատ, Վիէնըր Պանք-Ֆէրայն կը զբաղի նաեւ սեղանաւորական ուրիշ գործառնութիւններով։

Cie RUSSE

Navigation à Vapeur et de Commerce

ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Շաբաթուան երթեւեկութիւններ

Հոկտեմբեր

Դշ. 8/21 Ինէպօլի, Սինոպ, Սամսոն, Օրտու, Կիրասոն, Տրապիզոն, Րիզէ և Պաթում. կէս օրէն առաջ ժամը 10ին։

Դշ. 8/21 Օտեսա. իրիկուան ժամը 4ին։

Եշ. 9/22 Իզմիր, Պիրէոս և Աղեքսանդրիա. ժամը 10ին։

Եշ. 9/22 Օտեսա. ժամը 4ին։

Ուր. 10/23 Սեվաստօպօլ. ժամը 10ին։

Շբ. 11/24 Օտեսա, ժամը 10ին։

Շբ. 11/24 Տարտանէլ, Միթիլլի, Իզմիր, Քիօս, Հռոդոս Մերսին, Իսքէնտէրուն, Թրիպոլի, Պէյրութ, Հայֆա, Եաֆա, Բոր-Սայիտ և Աղեքսանդրիա. ժամ 4

50—24

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՄԱՐՍԷՅԼԵԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ

Ն. ՓԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

ՍՊԱՍՈՒԱԾ ՇՈԳԵՆԱՒԵՐ

Հոկտ. 23ին, Ժօնք, Սեւ Ծովէն

ՄԵԿՆՈՒՄՆԵՐ

Հոկտ. 23ին, Ժօնք, Մարսիլիա։

Ա. կարգ Բարիզի համար 200 ֆր.
» » Մարսիլիոյ » 160 »
Բ. » Բարիզի » 150 »
» » Մարսիլիոյ » 120 »

Ա. կարգ Լոնտոնի համար 248.35 ֆր.։
Բ. կարգ 185.10 ֆր. (Տիէբի ճամբով)։

Տեղեկութեանց համար դիմել Գործակալին՝ Թոփհանէ, քարափին վրայ։

15 50—22 Թ. ՌԸՊՈՒԼ

ՄՕՍ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ճամբորդ եւ ապրանք փոխադրող շոգենաւեր

Ա. ԿԱՐԳԻ	Բ. ԿԱՐԳԻ
Սեդի	Նայդօգրիս
Մենիս	Էմիլիս
Րաֆիսիս	Պուզրիս
Թէյպըր	Մօէրիս
Նարպօն	Ֆայիք
Նավարին	Ֆարօս
	Թեպա

Առաջին դասու ճամբորդներուն համար [illegible] ընդունուած են, [illegible] ամենայն յարմարութիւն, [illegible]։

Երկրորդ կարգի ճամբորդներուն ալ [illegible]։ Բ. Պոլսէն Լիվրբուլ Ա. կարգի գին է 15 » » Բ. » » » 11

Կը ընդունի փոխադրութիւններէն որ [illegible] Լիվրբուլ [illegible] 24 [illegible]։

Ամերիկայի եւ Ռուսիոյ [illegible]։

Դիմել առ Տ. Վ. ՍԻՄՍՈՆ եւ Ընկ. Գործակալք Ռեսիտ խան, Գալէտ տարթ. Թիւ ՃԷՐՄ ՊՕՍ Ընկ.

50—19 31 [illegible]

Արտօնատէր ԳԱՐԵԳԻՆ ՊՕՅԱՃԵԱՆ